1896 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29 (11 Հոկտ.) ԿԻՐԱԿԻ

№. 113—ՏԱՍՆԵՐԵՔԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 113

1896 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29 (11 Հոկտ.) ԿԻՐԱԿԻ

ԱՐԶԱԳԱՆԳ

Հրատարակվում է շաբաթշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։

Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարեանը 6 ռ. 3 ամսեանը 3 ռ. և մի ամսեանը 1 ռ.։ Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատունը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзагангъ“. կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang“.

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և ազգ. օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարվում են իրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԳԻՒՏ ՔԱՀԱՆԱՅ և ԹԱՄԱՐ ՏԷՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԱՂԱՆԵԱՆՑՆԵՐԸ խորին վշտով յայտնում են իրանց բարեկամներին և ծանօթներին իրանց ամենասիրելի որդու, Պետերբուրգի Կայսերական Արհեստագիտական դպրոցի ուսանող

ԵՐՈՒԱՆԴ ԱՂԱՆԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ կարճատև հիւանդութիւնից յետոյ։

Ամփիոքը կիրակուրուի երկուշաբթի, երեկոյեան 6 ժամին. Տրոյիցկի փողոց, տուն Թուխարելիի։

Թաղման օրը առանձին կը յայտարարուի։

Սեպտեմբերի 27-ին, երեկոյեան հիւանդութիւնից յետոյ վախճանուեց ուրբաթիզ զորաց գեներալ-մաեոր

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԹԷՈԴՈՐԵԱՆ ՀԱԽՎԵՐԴԵԱՆԸ

որոյ մասին հանգուցեալոյ եղբայրներն և քոյրերը հաղորդում են ազգականներին և բարեկամներին։

Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ երկուշաբթի, սեպտեմբերի 30-ին, առաւօտեան 10 ժամին հանգուցեալի ընակարանից (Սօլոլակ, Սագօվայա փողոց, տուն՝ Զարգանեանի № 48) դէպի Վանքի մայր եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

Հոգեհանգիստ կըկատարուի կիրակէ, սեպտեմբերի 29-ին, երեկոյեան 7 ժամին։ (1—1)

ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ և ԿԱՏԱՐԻՆԷ ԹՈՎՄԱՍԵԱՆ ՍՊԱՆԴԱՐԵԱՆՆԵՐԸ յուսօք սրտի յայտնում են առաջինը իւր սիրելի որդու, իսկ երկրորդը տագեր՝ անասնաբոյժ

ՄԽԻԹԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՍՊԱՆԴԱՐԵԱՆԻ

մահը և խնդրում են հանգուցեալի ազգականներին, ծանօթներին և ծառայակիցներին շնորհ բերել յուղարկաւորութեան, կիրակէ սեպտեմբերի 29-ին, առաւօտեան ժամը 10-ին, Թիֆլիզի Միրայէլեան հիւանդանոցի մատուռից դէպի Խօջիվանքի գերեզմանատան եկեղեցին, ուր կըլինի պատարագ և թաղում։ (1—1)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տարեդարձ օծման Տ. Տ. Մըկրտչի Սրբազնագոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց։

Վերջին դէպքերը Թիւրքիայում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Ռուսաց Կայսրը Ֆրանսիայում։ Զինուորագրութեան ենթարկուող երիտասարդաց թիւը։ Իշխ. Ամատունու գործի վճիռը։ Սեղրակ Մանդինեան։ 1900 համաշխարհային ցուցահանդիսում ռուսաց բաժին։ Նպակի պատուհասման արուեստ։ Նիժ. Նովգորոդի համառ. ցուցահ. պարգևի արժանացածները։ Պետերբուրգում։ Կեղծ թղթադրամ շինողների դատը։ Թուրք հոգաբարձու։ Հայկական թատրոն։ Կարսի պարսկական փոխ-հիւպատոս։ Ղուբայից։ Թղթակցութիւն Ասիաբաղից։ Մի օր Բաքուում։

ՖԵԼԻԵՏՕՆ.—Հնից և նորից։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՖԵԼԻԵՏՕՆ

ՀՆԻՑ ԵՒ ՆՈՐԻՑ

(ՆԻԹԵՐ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ)

(Հարունակութիւն *)

Ի. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱՀԱՊԵՏԻ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՌ ՆԵՐՍԷՍ Ի-ՐՈՐԴ

Հասկանալի է, որ Հաղանում վարած կեանքը Նաղարեանցի համար մի կերպ աքսոր էր։ Նա կըցանկար աւանդել իւր գիտութիւնները բուն հայրենիքում, մի բարեվայելուչ բարձրագոյն հայ ուսումնարանում, հարիւրաւոր հայ պատանեաց...։ Ո՞ւմից սպասելու էր մի այդպիսի ազգաշէն հիմնարկութեան հաստատութիւնը — եթէ ոչ ուսումնասէր Ներսէսից, որ այդ միջոցում ազգային միաբերան ընտրութեամբ և կայսեր հաստատութեամբ բարձրացել էր կաթողիկոսական գահը և այժմ Պետերբուրգում սիրալիր ընդունելութիւն էր գտած բարձրագոյն պալատից և նախարարներից։ Եւ ահա, դեռ ևս իւր առաջուայ Նամակներին պատասխան չստացած, Նաղարեանցը 1843 թուի դեկտեմբերի 9-ին Հաղանից դիմում է առ Ներսէս Կաթողիկոսն ի Պետերբուրգ հետևեալ գրութեամբ՝

«Վեհապատիւ Քահանայապետի Հայկեանս Ազգի Տեառն Տեառն Ներսիսի ի Ս. Նաղարեանց խնդալ։

«Վաղ ուրեմն մատուցեալ նամակաւ ի պաշտել զՅոյդ պաշտելի՝ ակնկառոյց սպասեմ ցայսօր քաջալերականացդ լրոց ի տխուր պանդխտութեանս վայրի։ Էր սեմ՝ թէ վասառողջութիւն ինչ պարտեալ զՁեզ ի մահիճ խօթութեան՝ որ ոչ ներէր Ձեզ ուղղել արտաքս զՁերդ մտադրութիւն, որով արդարև բարձեալ լինի ամենայն առիթ տրտնջանաց։ Կեցցէ, կեցցէ պարագայ ամօք անասան առողջութեան արժանաւոր ժառանգդ հոյակապ մերոց Նախնեաց՝ առ ի զփափագ ազգասիրացս սրտից ի սպառ կատարման ժամանեցուցանել։

«Իցէ թէ ճանձրացի ունկն վեհապատիւ Հօրդ՝ եթէ վերստին սկիզբն արարից ճառելոյ ստանօր զպիտոյից ազգիս և զեղանակէ յիմանալեացն սակի օժանդակել նորայն բարեբաղդութեան. բայց անկարանամ լռել՝ խնամատեալ՝ եթէ ի հեռանալ Ձեր յաշխարհ Հայաստանեայց՝ այս գործ լիցի ինձ յաւերակաց ատոի Կաղանայ հասուցանել առ Ձեզ զձայն իմ և լսել ինչ ի Ձերոյ կողմանէ։ Անհաւսիկ է շարժառիթ կրկին նամակիս, շարժառիթ հարկեցուցիչ՝ որում ընդդիմանալ ոչ զօրեմ՝ բայց մի այն վնասելով ազգիս, որոյ ապէսք օր քան զօր անդարմանելի գործին։ Ի լը. ծակս հասու մաց զայսոսիկ կշռելով վսահանամ զոր ինչ յառաջն սղարանեալ գրէցի առ վեհապատիւ Տէրութիւնդ, այժմ ընդարձակարան Ձեզ առաջի դնել։ Մեծ են խնդիրք առաջիկայս դարու և արժանի խորին մտադրութեան ճշմարիտ ազգասիրացն դասու. հունձք բազումք են և մշակք սակաւ։ Հոկայն Եւրոպայ ցաւօք և հեծութեամբ մշակիալ և արդասաւորեալ զանդաստան արուեստից և գիտութեանց՝ հրաւէր կարգայ այսօր Հայոցս՝ եթէ նախանձաւոր իցեմք լաւացն, եթէ ունիցիմք աչս տեսանելոյ և ականս լսելոյ— փութալ, ճեղքել ի հոգեպարար վայելս նորուն վաստակոց յաստիրսի բազմանուն դպրութեանց իմաստանալ և իմաստնացուցանել զայլս։ Ազէ՜, հլցուք ապա ի մարտ ճգանաց՝ Քս առաջնորդելով մեզ յայսմ, և մեր արիարար շահատակելով վասն առաջիկայից և հանդերձելոց, սակաւ կատարելով զպարտականութիւնս մեր առ Աստուած և առ մարդ։

«Ազգ Հայոց կայով ի ժամանակի, պարտի յառաջ խաղալ ընդ նմին, և խելամտեալ ծանուց խնդրոց դարուս՝ ճանաչել ասեմ զանձինս և զայլս՝ զհետ երթալ շաւղաց իմաստասէր ազանց. ապա թէ ոչ՝ կլցէ զմեզ անյագ ծերունին կռնոս իբրև անպիտանացեալ որպիս ժամանակի. առ ինչ ուղղին բանք իմ և միաբ, չէ ինչ դժուարին իմաստասիրել։ Զմր օրինակ խելամտեալ մերոյս Նպանակի պարտիմք ի մի հաւաքել զամենայն զկարողութիւնս և զմիջոցս ազգիս, առ ի միաբան զօրութեամբ յարդարել և վարուն գործել զուղի լուսաւորութեան մերայնոց՝ նախ առաջին մշակելով զայնս՝ որ հայէին ի հնութիւնս մերոց նախահարց, և ապա քաղեալ զընտիր ընտիր ծաղկունս Եւրոպեան կրթութեան փոխադրելով յարգաւանդ երկիր Արարատեան աշխարհի։ Առ ի զերկրկիմի զայս նպատակ ի գլուխ առնել, այսինքն է՝ բանալ զմտաց աչս Հայկազանց առ ի տեսանել և ճանաչել զնախնիս իւրեանց և ապա սեպհականել անձանց զարգասիս Եւրոպական ուղոյ՝ պարտէ, որպէս կարծեմ, բանալ ի բուն հայրենիս Հայկազեան ժողովրդեան, յԱրարատեան ասեմ աշխարհի, վերին դպրոց ինչ ազգային՝ ուսումնական ընկերութեամբ հանդերձ։ Պաշտօն առաջնոյն պիտէր լինել՝ ընդ ակնարկութեամբ հմուտ զաստիարակաց կրթել և մարդել քանքարաւոր պատանիս քան առ ի լինել յապայս արժանաւոր վարդապետս ազգի. իսկ պաշտօն յետնոյն՝ ըստ պիտոյից և կարեաց ազգին երկասիրել առ ձեռն պատրաստ մատեանս ըստ պիտութեանց՝ առ ի տալ աշակերտաց ազգային դպրոցին զմիջոցս անխափան յառաջ խաղալոյ յորկիցէ ուսմունս։ Այդպիսի դպրոցի ազգային պարտական էր յառել զճիգն իւր մանաւանդ յաղգայինս և ի հարազատս, որ է, առաջնորդել Հայոց պատանեաց ի հիմնաւորն տեղեկութիւն աշխարհի և ժողովրդեան մերոյ նոյն և իմանալի զանձուց նորա՝ որոց հետամուտ են այժմ ուսումնականք Եւրոպիոյ։ Լեզու Հայկական, պատմութիւն զգրութեան Հայոց, պարապումն հայ հեղինակաց հնոց և նորոց, պատմութիւն և աշխարհագրութիւն Հայաստանեայց են նախապատիւ առարկաք մտադրութեան ազգային դպրոցի։ Յետ այսորիկի ի սակս ընդհանուրն կրթութեան՝ կարևոր էր ումն քրիստոնէական վարդապետութեան, պատմութեան և աշխարհագրութեան ընդհանուր, չափարտութեան, բնականութեան, լատին և յոյն լեզուաց, իսկ ի նորոցս՝ գերմանական և գաղղիականին, որք յարգք են սակս ճոխ դպրութեանց իւրեանց և կարեն արքանեկել Հայոց իբր առատաբուղխ աղբերս լուսաւորութեան, նոյն և Ռուսացն, որ է լեզու թագաւորութեան՝ որոյ խնամարկութեան հաւատարիմ է և ազգ Հայոց։ Վասն որոց ցանկային առ յապայս մտանել ի սուրբ կոչումն քահանայութեան՝ անհրաժեշտ պիտանի էր պատմութիւն եկեղեցական և անձից՝ անցելոց ի քրիստոնէութիւն ի սկզբանէ սորա մինչև այժմ։ Զայս ամենայն գիտութիւնս, թէ ասիականս և թէ եւրոպականս պարտ է աւանդել ի լեզու Հայերէնի, լեզու Հայկական յազգային դպրոցի՝ անդ ունի կալ և մնալ միայնակ միջոց լուսաւորութեան։ Սակայն հնարաւորեսցին Հայկազունք ի մայրենի լեզու իւրեանց մտածել, խոկալ, և խօսիլ զուսումնական իրաց։ Եթէ քանի՞ չարաչար մեղանչին նոքա Աստուծոյ և ազգի իւրեանց, որ ի լեզու օտար ստան ուսուցանել զգիտութիւնս հայոց մանկանց՝ այդ մերկապարանոց առաջի դնեմ ամենայն ճշմարիտ ուսելոց, և որոց գիտան միանգամ՝ թէ քանի՞ հարիւրաւոր և հազարաւոր պարարեր է՝ աւանդելն զգիտութիւնս ի լեզու ազգային, որ զոյգ ընդ կաթին թափանցեալ ի սիրտ, ի հոգի մանկանն՝ դիւրաւ փոխէ զամենայն ի ծուծ և յարիւն նորա, որ ինչ ի կանին և զաղղիականին, որք յարգք են սակս ճոխ դպրութեանց իւրեանց և կարեն արքանեկել Հայոց իբր առատաբուղխ աղբերս լուսաւորութեան, նոյն և Ռուսացն, որ է լեզու թագաւորութեան՝ որոյ խնամարկութեան հաւատարիմ է և ազգ Հայոց։ Վասն որոց ցանկային առ յապայս մտանել ի սուրբ կոչումն քահանայութեան՝ անհրաժեշտ պիտանի էր պատմութիւն եկեղեցական և անձից՝ անցելոց ի քրիստոնէութիւն ի սկզբանէ սորա մինչև այժմ։ Զայս ամենայն գիտութիւնս, թէ ասիականս և թէ եւրոպականս պարտ է աւանդել ի լեզու Հայերէնի, լեզու Հայկական յազգային դպրոցի՝ անդ ունի կալ և մնալ միայնակ միջոց լուսաւորութեան։ Սակայն հնարաւորեսցին Հայկազունք ի մայրենի լեզու իւրեանց մտածել, խոկալ, և խօսիլ զուսումնական իրաց։ Եթէ քանի՞ չարաչար մեղանչին նոքա Աստուծոյ և ազգի իւրեանց, որ ի լեզու օտար ստան ուսուցանել զգիտութիւնս հայոց մանկանց՝ այդ մերկապարանոց առաջի դնեմ ամենայն ճշմարիտ ուսելոց, և որոց գիտան միանգամ՝ թէ քանի՞ հարիւրաւոր և հազարաւոր պարարեր է՝ աւանդելն զգիտութիւնս ի լեզու ազգային, որ զոյգ ընդ կաթին թափանցեալ ի սիրտ, ի հոգի մանկանն՝ դիւրաւ փոխէ զամենայն ի ծուծ և յարիւն նորա, որ ինչ ի

*) Տես «Արձագանք» № 112.

ՍԱՀՄԱՆԱԳԻՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱՏՎՈՒ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ԳՈՂԹԱՆ ՀԱՅԵՐԻ ԳՈՅԳԸ

(Հեռագիր ռուսական գործակալութեան)

Կ. ՊՕԼԻՍ. — 26 սեպտեմբերի։ Նախարարների արտակարգ խորհրդում քննվում էր արտասահման գաղթած հայերի գոյքի գրաւելու խնդիրը։ Մինչ այդ խնդրի լուծումը, հայերին պատկանող սեպհականութեան ցուցակագրելը դադարեցրած է։

ԻՐԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԻՍՏՈՒՄ

Արտասահմանի լրագիրների ասելով Կ. Պոլսում իրերի գրութիւնը հետզհետէ բարուրվում է։ Դիւանագիտական շրջաններում գոհ են մանաւանդ, որ եւրոպացի անդամներ են նշանակուած այն կոմիսիայում, որ հաստատուած է վերջին կոտորածի պատճառները քննելու համար։ Սուլթանն իւր անձնական միջոցներից 150,000 լիրա է ուղարկել ելևմտից նախարարութեան. այս գումարը, ինչպէս ասում են, գործ կըգնուի պաշտօնականներին հանելիք ռոճիկները հատուցանելու, վերջին անկարգութեանց միջոցին նեղեալ կորուստներ ունեցողներին վարձադրելու և այլն։

Հայերն իրանց հանգիստ են պահում։ Մեծ երկիւղ մէջ էին որ սեպտեմբերի 18-ին—անցեալ 1895 թուի հայկական ապստամբութեան տարեդարձի օրը—նորից մեծ անկարգութիւններ չիրկնուին, սակայն Բերլինից հեռագրում են «Նովոստի» լրագրին, որ հրահանգներ են ուղարկուած Կ. Պոլսի զեմանական գեսպանին, որոնց զօրութեամբ նա պէտք է պաշտպանի ռէֆօրմների ծրագիրը։

—

ՀԱԿԱՍԱՀԱԳԱԿԱՆ ՄԻՏԻՆԳՆԵՐ

—

Մեծ Բրիտանիայում վերջին ժամանակները տեղի են ունենում բազմաթիւ միտինգներ, որոնց նպատակն է բողոքել տաճկական անգութութիւնների դէմ։ Այսպէս, օրինակ, սեպտեմբերի 17-ին հէնց միայն Լոնդոնում 12 այդպիսի ժողով է գումարուել։ Սոյնպիսի տեղեկութիւններ ստացվում են նաև գաւառներից։ Այս բոլոր միտինգներում, որոնք ոչ թէ կուսակցական, այլ ընդհանուր ազգային բնաւորութիւն ունին, ընդունուած են որոշումներ, որոնցով տէրութեանը առաջարկվում է միջոցներ ձեռնարկել քրիստոնեաների վիճակը ապահովելու համար, միանգամայն խոստանալով տէրութեան ամբողջ ազգի ջերմ պաշտպանութիւնը։ Թէ արտասահման գաղթած հայերի, թէ ընդունուած որոշումների լեզուն ըստ առաջնոյն վերին աստիճանի սուր և անողոք է տաճկական կառավարութեան նկատմամբ։ Սեպտեմբերի 17-ին Նիւ-Եարկում տեղի ունեցած միտինգին, ստացուց Գլադստընից մի նամակ, ուր այդ մեծ մարդը ի միջի այլոց գրում է.

«Նիւ-Եարկը այն վայրն է, ուր ես առաջին անգամ, 64 տարի առաջ հրապարակով հանդէս եկայ. այս պատճառով ես կարծում եմ, որ իրաւունք ունիմ իբրև մի շատ ծեր մարդ, որ շուտով պէտք է վերջացնէ կեանքի հետ իւր հաշիւները, մի քանի խօսքով դիմել Ձեզ։ Երբէք չվհատէք և համարձակ ասացէք ճըշմարտութիւնը։ Հաւատի եղէք, որ մեր երկիրը ոչ մի բանից չի կարող երկիւղ կրել, երբ արդարութիւնը նրա կողմն է»։

—

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՍԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

—

«Frankfurter Zeitung»-ը հաղորդում է, որ սուլթանը նշանակել է մի միջազգային կոմիսիա վերջերումս տեղի ունեցած կոտորածների գործը քննելու համար։ Այս կոմիսիան կազմում են երկու ֆրանսիացի՝ պ. պ. Վիտալին և Լբլոկ, երկու անգլիացի՝ պ.պ. Բլունտ և Վուդ, մի հունգարացի՝ պ. Կոնիսօ Սեխենիա և մի գերմանական ազգ. Կամիսիոնէրփաշա։

Այս կոմիսիայի հաստատելու տեղեկութիւնը հաղորդվում է այն ինքնագիր նամակի մէջ, որ սուլթանը Գրումկով փաշայի ձեռքով ուղարկել է Վիլհէլմ Կայսեր։ Ամենահաւատալի աղբիւրներից հաղորդում են, որ այս նամակով սուլթանը առանձնապէս շեշտում է այն հանգամանքը, որ տխուր դէպքերը կրօնական մոլեռանդութեան ծնունդ չեն։ Ապա սուլթանը ամենայն խօսք է տալիս Կայսերը, որ քրիստոնեաներին այժմ ոչ մի վնաս չէ սպառնում և չի էլ սպառնայ ապագայում։

—

ՍԻՐԻԱՅԻ ԳԱՂԹԱՆ ՀԱՅԵՐԻ ԳՈՅԳԸ

(Հեռագիր ռուսական գործակալութեան)

—

Կ. ՊՕԼԻՍ. — 26 սեպտեմբերի։ Նախարարների արտակարգ խորհրդում քննվում էր արտասահման գաղթած հայերի գոյքի գրաւելու խնդիրը։ Մինչ այդ խնդրի լուծումը, հայերին պատկանող սեպհականութեան ցուցակագրելը դադարեցրած է։

—

ԻՐԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԻՍՏՈՒՄ

Արտասահմանի լրագիրների ասելով Կ. Պոլսում իրերի գրութիւնը հետզհետէ բարուրվում է։ Դիւանագիտական շրջաններում գոհ են մանաւանդ, որ եւրոպացի անդամներ են նշանակուած այն կոմիսիայում, որ հաստատուած է վերջին կոտորածի պատճառները քննելու համար։ Սուլթանն իւր անձնական միջոցներից 150,000 լիրա է ուղարկել ելևմտից նախարարութեան. այս գումարը, ինչպէս ասում են, գործ կըգնուի պաշտօնականներին հանելիք ռոճիկները հատուցանելու, վերջին անկարգութեանց միջոցին նեղեալ կորուստներ ունեցողներին վարձադրելու և այլն։

Հայերն իրանց հանգիստ են պահում։ Մեծ երկիւղ մէջ էին որ սեպտեմբերի 18-ին—անցեալ 1895 թուի հայկական ապստամբութեան տարեդարձի օրը—նորից մեծ անկարգութիւններ չիրկնուին, սակայն

այդ օրը ամենեին հանդիսաւոր անցաւ, որ մխիթարական նշան է համարվում։

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԲԵԼԳԻԿ

Արտաքոյ կարգի դատարանը մահուան է դատապարտել մի քանի հայերի, ի լիիս որոց մի հայի, որին Բելգիկի կառավարութիւնը յանձնել էր տաճկաց տէրութեան այն պայմանով, որ նրան ազատ կը թողնեն դատաստանական հարց ու փորձից յետոյ։ Այժմ բելգիական դեսպանատունը ամենախիստ կերպով պահանջում է, որ այդ հային ազատութիւն տրուի։

ՄԱՄՈՒԼԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Մի յաւ տեղեակ թղթակից այսպէս է նկարագրում Թիւրքիայի վերաբերութիւնը դէպի մամուլը։ 1884 թուին արտաքին գործոց նախարարութեան մէջ օտար մամուլի մի առանձին բիւրօ էր հաստատուած։ Այնտեղ էին ժողովում նաեւ լրագրների թիւրքիային վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները։ Այդ տեղեկութիւնները դեկոցանվում էին սուլթանին։ Սիրէէթ փաշան, որին վիճակուած էր այս զեկուցումներն անել, նոյն ինքն սուլթանի կողմից վանդուց պալատից, երբ մի յօդուած նրան պատիւ գայրացրել էր։ Ցիշեալ բիւրօն ահագին գումարներ է ստանում լրագիրներ կաշառելու համար։ Քան փրանսիական թերթերներ շաբաթ շաբաթ նրա պատներ են ստանում, իսկ կիսապաշտօնական հաղորդագրութեանց համար տաճկի կառավարութիւնը տարին 15-ից մինչեւ 25 ֆրանկ է հատուցանում։ Քրաքննութիւնը Թիւրքիայում միանգամայն անտանելի է։ Բացի այս, խեղճ լրագրները պարտաւորուած են ամենայն օր այն պաշտօնական սուտերը տպագրել, թէ բոլոր նահանգներում, սուլթանի շնորհիւ, ամեն ինչ կարգին է։

Ի դէպ, այս օրերս անխիղճ արգելուած է բոլոր խուզական թերթերի մուտքը Տաճկաստան։

„Pall Mall Gazette“ ի Հռոմի թղթակիցը պատգամանում է, որ Գլիկիայի դատի օրինական թեկնածու պիտի համարուի Հումբերտ իտալական թագաւորը։

«Հայոց թագաւորութիւնը,—ասում է թղթակիցը,—որ մի ժամանակ կոչվում էր Կիլիկիա, հիմնուել է Բուբէնից և տեւողութիւն ունեցաւ 1080-ից մինչեւ 1393 թ. Կիլիկեան գահի վրայ 1198-ին նստած էր Լեւոն Բ.-ի դուստր Զաբէլը և հաստատուց Յեկեսին II-ը պապի և հենրիկոս IV-ը կայսեր կողմերից։

Կիլիկեան թագաւորութիւնը չէր կարող գիմանալ թաթարների և սարակինոսների յարձակմանց, որոնք հեղեղուել էին մեզ, և իւր գոյութիւնը դադարեցրաւ ճակիների գալուց առաջ։ Բուբինեան հարստութեան վերջին թագաւորը, Լեւոն Ե.-ը, տպատամարան զրաւ իւր փեսայ՝ Կիպրոսի թագաւորի մօտ և մեռնելու ժամանակ իւր իրաւունքները կտակեց նրա որդուն։ Այսպէս ուրեմն հայոց գահի իրաւունքները անցան Լուսինեան հարստութեան, որի չորս ներկայացուցիչները իրօք թագաւորեցին այդ աւերակ թագաւորութեան

կարեւորագոյն է՝ եթէ կամիք զի տարբաստին և արմատս խորին ի մեզ արձակեսցեն գիտութիւնք։

«Այդպիսի դպրոց ազգային կարօտ գոյր բազմաց ուսումնական միջոցաց ի շնորհս ուսանողաց ի նմին և աշխատաւորաց ի գիտական ընկերութեան անդ։ Ի սոցունց սակի ոմն կարեւոր մատանեաց ըստ լեզուաց և գիտութեանց և այլ ուսումնական հանդերձանաց, զորս հնար էր հայթայթել հեշտիւ եղանակաւ ի ձեռս զրավաճառաց Ռուսաստանի։ Զիւրեկիս ի մատենից ի լոյս ընծայելոց ի Գնոմիկ՝ պարտական էր ունել զդրոց այդպիսի, զոր օրինակ զընթիր տիպս հեղինակաց Հայոց և զայլ գործս վերաբերեալս յուսումն Հայկեանցն։ Վարժապետք առարկայից ասիականաց և Եւրոպական կարեն լինել Հայք և Եւրոպացիք, բայց հմտութիւն սոցա պարտ էր լինել վայելել ի գիտնոց և յիմաստուն արանց, որպէս զի մի անպիտանք մուծեալ ի սուրբ գործ հայրենի՝ վնասեսին ազգի մերում։ Ոնօրէնութիւն զբաղոցիդ պարտ էր այնպէս իրականալ, զի աշակերտք և վարդապետք (վարժապետք) ընակէին ի միում շինութեան. աշակերտք ունէին կերակրել և զգեստաւորել ծախիւք զպրոցին, իսկ վարժապետք ըստ արժանեաց թոշակաւորել ի կառավարութենէ նորին։

«Այժմ խօսեցայց զմիջոցաց հաստատելոյ զպրոցին, զորոյ ուրուական սակաւուք ստուերագրեցի ի վերոյ։ Առ ի հեշտին և զիւր ճանապարհաւ ժամանել յայս նպատակ տեսչալի, պէտք էր Վեհափառ գլխոյդ և անդրանիկ աղգասիրդ զբաւոր եղանակաւ ծանուցանել համօրէն ազգիդ որ Ասիա և յԵւրոպայ՝ զազգաշէն գիտոցութիւն Ձեր (եթէ էր յիրա.ի) և հրաւիրել զնոսա յընտրութիւն օժանդակութիւն այսմ պատուական և գովելի ձեռնարկի։ Թիւ համօրէն Հայոցս համարի իբր 4 միլիոն։ Դիցուք թէ հնարաւոր ի սոցունց երկու միլիոնք զոհաբեր լինիլ յայս գործ հայրենի միով ռուբլեաւ ընդ այր. յայնժամ ունէին գումարելի երկու միլիոնք, որոց տոկոսիս, տալով զայնս ի վարչեալս ի սեղանն արքունի, գործէին յամին ռուբլիս 80,000, հաշուելով քառասարիկ տոկոսիս ըստ հարիւր, որով շատ էր ապաքէն կառուցանել ազգային զպրոց ինչ վերին և յատին պահել զնա՝ արժանաւոր եղանակաւ թոշակաւորելով զի նմին աշխատաւորս յատարիղի գիտութեանց և զայլ սպասաւորս և պաշտօնեայս որոց նոյն կարօտեսցի։ Այս հնարաւոր էր յանցանել ժամանակաց և ի բազմապատիկ տոկոսեաց գլխոյն զրամոյ, նաև առաքել ի Գերմանիա զոսս յառաջագէմ և յաջողակ գտանիցին յուսմունս, առ ի կատարելագործել առ սոս գիտնական վարդապետաց Եւրոպիոյ ի հռչակաւորյոյն համալսարանս, որպիսի են Բերլինայ—Պրուսիոյ, Լէյպցիկայ—Սաքսոնիայ, Գեռնինգենայ—Հանովրիոյ և այլն։

«Ահաւասիկ է, Հայր Վեհափառ, եղանակ և ուղի, որով կարէ անօրութիւնս հնարաւոր Ձեզ լինել հանել զազգ Հայոց ի շարս լուսաւորեալ ազանց Եւրոպիոյ և արձան յաւէրժական յիշատակաց կանգնել Ձեզ որպէս ի տարեգիրս մարդկութեան, նոյնպէս և ի սիրտ Հայկեանդ ազգի։

«Զայլոցն ամենեցուն, որք հային ի ներքին անօրէնութիւն և ի բաւուրս կարգադրութիւն ազգային զպրոցիդ, ունիմ մանրամասնաբար խօսիլ ընդ խոհական և իմաստուն Կաթողիկոսիդ, եթէ կամք ինչ էր Տէրութեանդ շնորհել զմիջոցս դիմելոյ առ Ձեզ ի Պետերբուրգ։

«Ի կնիք ազգասիրական իմոյս առաջարկութեան և յաջողոյ անխարդախ տենչանացս օգտի և պայծառութեան Հայրենեաց, յաւելում ասել՝ թէ ի հաւան գտանել Ձեր ընդ միտս իմ՝ կազմ և պատրաստ եղէց յիմոյն կողմանէ դոհաբեր լինիլ լուսաւորութեան ազգիդ 400 ուսումնական մատեանս և հանդերձանս, զորս մեծի արժաթոյ ստացեալ է իմ ի Դերպտ Լիֆլանդիոյ։

«Անասան յուսով և ակնկալութեամբ սպասելով մխիթարական առ ի Ձէնջ պատասխանոյ՝ եմ և եղէց ի յարիտեան վեհապատիւ Տէրութեանդ բոլորանուէր ծառայ Ս. Նաղարեանց։ Ի 8 դեկտ. 1843. ի Կազան»։

Նաղարեանցի այս նամակին, Ներսէսը վերջապէս պատասխանեց Պետերբուրգից 1844 թուի փետրուարի 10-ին, հայրաբար խրատելով և թեթեւ յանդիմանութիւն կարդալով նրան։ Ներկայ բոլորիս չունիմք մեր ձեռքում Ներսէսի այդ օրինակելի գրութիւնը և այդ պատճառով մի առ ժամանակի յետաձգում ենք նրա տպագրութիւնը։ Բայց և այնպէս Նաղարեանցի հետագայ պատասխանից իմացվում է Ներսէսի գրութեան միտքը։

«Ծաղիկ և պարծանք Հայկազեանս անուան՝ Տէր Տէր Ներսէս, վեհապատիւ Պատրիարքս Առաքելական Հայրապետ Լուսաւորչական եկեղեցւոյ Հայաստանեաց աշխարհի։

«Մեծի ապաքէն և գերօրինակ դիպեալս բազմի իմս անօրութիւն՝ արժանացեալ Հայրապետական ողջունի և օրհնութեան, որոց ի հարուստ ժամանակաց հետէ ակնկալեալ սպասէի. այն եկեղեցի սա ինձ նոր իմն անցք արժանի յիշատակաց ի կեանս իմ և աղբիւր անսպառ՝ անոյշ մխիթարութեանց ի պանդխտութեան վայրի։

«Վեհամեծար նամակ Ձեր է զի նմանանալ ազգաձայն ճայթմանց թղթային ամպոց, զկայծակունս հրոյ արտաքս ցօլացուցանողաց իբր ի պատուհասաց կոծ առնել զանձն պարաւոր, և է զի՝ մեղմատարափ անձրեւոյ քաղցր ի սընտուղ բուսականաց յերկիր տեղացելոյ, արդարև շնաշխարհիկ իմն զուգախառնութիւն երկոցունց ներհական տեսութիւն երկոցունց ներհական տեսարանաց՝ հատու յանդիմանութեանց ասեմ և ճշմարիտ հայկական սիրոյ ինձ առաջի պատկերացուցանէր։ Երջանիկ է անձն իմ՝ արժանացեալ Ձերոց իմաստուն խրատուց և առաջնորդական յանդիմանութեանց, մանաւանդ զի կից ընդ սոսին հանդիսացեալ տեսանին բարիմիտ և բարեացակամ սիրտ և հոգի, որ պիտի Ձերքն ինձ ճանաչին ի սկզբանէ մինչեւ ցայսօր։ Ուստի ոչինչ ի կարեւորացն համարեալ ժամավաճառ ասատանօր գեղերիս ի չբմեղս զիս կացուցանել առաջին Ձեր, անցանեմ ի պատասխանատուութիւն զայլոցն բազմաց՝ առ ի Ձէնջ սիրագրելոց։

«Վեհապատիւ Հայրութիւն ձեր հաւան գտեալ ընդ ջատագովութիւնս իմ՝ որ ի շնորհս Եւրոպեայ ազգայն ուսումնականութեան, և իմոյս քաջալերական հրաւիրանաց առ հասարակ ի նոցայն թեակոխել ի շուրջս գիտութեան և ճարտարութեան, գեղեցիկս իմաստասիրէ՝ թէ այս հուչակեալ նոցա յիմանալեացն հանդիսի գերազանցեալ քան զչափ գերազոյն իմաստութեան պարգեւաւորին Եւրոպեան շնորհացն։ Եւ թէ արդեօք մարդկայնոյ իմաստութեան՝ թէպէտ Եւրոպական իցէ, թէպէտ Ասիական յառաջեալ երբէք քան զԱստուածայինն։ Զազգասիրական խորհրդածութիւնս իմ, արդասիք անմեղ և պարզ մտաց, սակաւ մի այլապէս առեալ Տէրութիւն ձեր, ի միտս լինի իբրու թէ ի քթթել ական հընարաւոր կարծէի զմեբանոցն լուսաւորութիւն, իբրու թէ պարանալ իմ ի մոլոր տեսութիւնս, երազի յեղաշրջել զկարգ և զօրէնս բնութեան զամենիմաստ անօրէնութեամբն Աստուծոյ ելգալս և կնքեալս անյեղլի ամրութեամբ։ Ո՛չ, Հայր վեհամեծար, խոնարհաւ եմ և ես ի պատմութենէ ազգաց և դպրութեանց Եւրոպիոյ, զի ամենայն յառաջատաւութիւնք ի հմտութեանց ասպարիսն զհետ եկին միշտ ի փոքունց և ի փանաքի սկզբանց, եթէ դարաւոր այն մեծաքիրան վաստակոց պէտք եղեն մինչեւ ի ձեռս բերել զբազմահարուստ զայն գումար բազմասան գիտութեանց, և մինչեւ ճանրը ի վեր առեալ սլանալ ի վերին յայն գաւառ՝ յորում մեք զԵւրոպացիս տեսանեմք։ Թէպէտ մեզ յետնոցս հեշտին է առաւել կիթել զպատուղս, զորոց սերմանիս ցանեաց Եւ թէ արդեօք մարդկայնոյ իմաստութեան՝ թէպէտ Եւրոպական իցէ, թէպէտ Ասիական յառաջեալ երբէք քան զԱստուածայինն։ Զազգասիրական խորհրդածութիւնս իմ, արդասիք անմեղ և պարզ մտաց, սակաւ մի այլապէս առեալ Տէրութիւն ձեր, ի միտս լինի իբրու թէ ի քթթել ական հընարաւոր կարծէի զմեբանոցն լուսաւորութիւն, իբրու թէ պարանալ իմ ի մոլոր տեսութիւնս, երազի յեղաշրջել զկարգ և զօրէնս բնութեան զամենիմաստ անօրէնութեամբն Աստուծոյ ելգալս և կնքեալս անյեղլի ամրութեամբ։ Ո՛չ, Հայր վեհամեծար, խոնարհաւ եմ և ես ի պատմութենէ ազգաց և դպրութեանց Եւրոպիոյ, զի ամենայն յառաջատաւութիւնք ի հմտութեանց ասպարիսն զհետ եկին միշտ ի փոքունց և ի փանաքի սկզբանց, եթէ դարաւոր այն մեծաքիրան վաստակոց պէտք եղեն մինչեւ ի ձեռս բերել զբազմահարուստ զայն գումար բազմասան գիտութեանց, և մինչեւ ճանրը ի վեր առեալ սլանալ ի վերին յայն գաւառ՝ յորում մեք զԵւրոպացիս տեսանեմք։ Թէպէտ մեզ յետնոցս հեշտին է առաւել կիթել զպատուղս, զորոց սերմանիս ցանեաց Եւ

ները լցուած էին, Երբ որ Կայսրն ու Կայսրուհին ներս մտան, փառաբանութիւնները կրկնուեցին։ Հանդիսատեսները տեղերից վերկացան, յոտնկայս լսեցին ռուսաց օրհներգը, որից յետ բուն կերպով ծափահարեցին, Կայսրը գլուխ եկաւ պատշգամը։ Անպակաս բազմութիւնը ազգակներով ողջունեց Նորին Մեծութեան։ Բալտից յետոյ, ռուսաց օրհներգը և մարսելիզը կրկնուեցին և ուրիշ եւս խնդագին ազգակներ յարուցին։ Նոյնպիսի ազգակներով ճանապարհ դրուեցան Նոցին Մեծութիւնները։

Հանդիսաւոր ներկայացման ժամանակ բոլոր դերասանները, երաժշտութիւնն երգախումբը կատարեցին ռուսաց օրհներգը, ապա ներկայացուց «Միգուրդ» օպերայի 2-րդ գործողութիւնը։ Խոպամիջոցին Կայսրը հանձնեց տեսնել արաբ շէյխներին։ Կայսրը մի քանի բոպէ խօսեց շէյխների հետ, ապա Կայսրուհու հետ միասին այցելեց Օպերայի ֆոյէն։ Թատրոնի վերջին մասն էր «Գոհրիգանի» կատարումը։ Ժամի 12 և 20 բոպ. Նոցին Մեծութիւնները մեկնեցին թատրոնից, ռուսաց օրհներգի ձայնակցութեամբ։ Փորը Նոցին Մեծութիւններին ուղեկցեց մինչեւ գեսպանատուն։

Երկ երեկոյեան Փարիզը ներկայացնում էր առասպելական տեսարան։ Բոլոր ազգաբնակութիւնը, դատարաններից եկած բիւրաւորներից սատարացած խռնուելով լցուեց մեծ բուլուարները, Ելիսեան դաշտերը, գլխաւոր փողոցները։ Երեքտարական կամարներ, գաղ, գոյնզգոյն գունեներ, բոլոր թատերում պարահանդէսներ, ուր մեծ ուրախութիւն է տիրում։ Տօնախմբութեան կենտրոնն են կազմում Ելիսեան դաշտեր և Տրոկադերօ, ուր որ բազմութիւնը անհամար է։ Սենայի վրայ գիշերային տօնախմբութիւն է կազմուել։ Հրաժարմուշներ վառուեցին Տրոկադերոյում, Մոնմարտրում և Բելվիլլում։

Սեպտ. 25-ին ցերեկուայ ժամի 11-ին Նոցին Մեծութիւնները գնացին Ինվալիդների տունը, ուր նրանց հանդիպելու հաւաքուել էին բազմաթիւ զօրապետներ։ Ցաւ և առաջ Օպոստոփաս ճանապարհորդները այցելեցին Նապոլէոնի դամբարանը, որի առաջ Կայսրը լուռ կեցաւ մի քանի բոպէ։ Ապա Կայսրը իջաւ շէրմի մէջ։ Այնուհետեւ անցնելով մատուռը և այցելելով հիանալի դահլիճը, սեղանատունը և հրշեջաւոր մուզէոնը, Նոցին Մեծութիւնները դուրս եկան տեսից հանդիսարան—դաւիթը, ուր գտնվում էին զօրապետները և շարուել էին ինվալիդները։ Կէս օրին Կայսրը և Կայսրուհին դարձան գեսպանատուն, ուր որ հանգեցան նախաճաշելու։

Պանեւոնը մտնելու ժամանակ Նոցին Մեծութիւններին դիմաւորեց լուսաւորութեան նախարարը։ Ինքնակալ հիւրերը իջան շերմը, մի բոպէ կանգ առան Կարնոի դամբարանի առաջ։

Ս. Ստուածածնի վանքի նախագահում Նոցին Մեծութեանց և Փարի հանդէպ եղան կարդինալը և դեներալ—վիկարները։ Նոցին Մեծութիւններին ու Փարը դիմեցին տաճարի միջին մասը և կողմերը և մի քանի նուագ կացան Գաստոբի դամբարանի առաջ, և ապա գնացին տեսնելու զգեստատունը։

Ալէքսանդր III-ի կամուրջի հիմնադրութեան արարողութիւնը լիովին յաջողուեց։ Մինչ - Սիլլին Գայսեր նուիրած է մի գրուատ։ Մանկահասակ օրիորդներ մակուկից դուրս գալով, Կայսրուհուն ծաղուցին զբոշմագործ արծաթէ ծաղիկներ։ Նոցին Մեծութիւնները մեկնեցին ժողովրդեան բերկրալի աղաղակների ուղեկցութեամբ և գնացին դրամաշնորհութեան պալատը։

ՓԱՐԻԶ, 26 սեպտեմբ. — Ալէքսանդր III-ի կամրջի հիմնարկութեան հանդէսը։ Խուռն բազմութիւն, 13,000 հրաւիրեալներ վրանների ներքոյ, պատգամաւորներ, ծերակոյտ անդամներ սպասում են Նոցին Մեծութեանց դալստեան։ Ս. ռանձին շրջապատի մէջ տեղաւորուած են ընդհանուր խորհուրդների նախագահները, մեծ քաղաքների քաղաքապետները, առեւտրական պալատների, նշանաւոր առեւտրական հաստատութեանց, երկաթուղիների և բանկերի պատգամաւորները։ Գեսի միւս ափում գտնվում են միւս հրաւիրուածները։ Իւրաքանչիւր ափում երկու բարեայ սիւներ պահպանում են պարաններն, որոնք պատկերացնում են ապագայ կամուրջը։ Նոցին Մեծութիւնները ժամանում են 3 ժամին կէսօրից յետ։ Երկու ափերումն էլ ածում են թմբուկներ և լսվում ուրախութեան աղաղակներ։ Սենայի վրայ գտնուող տրմպիկից ի նշան ողջոյնի արձակվում են թնդանօթներ։ Զինուորական երաժշտական խումբը ածում է ռուսական օրհներգը և մարսելիզը։ Փորը գիմաւորում է Նոցին Մեծութեանց և ողջունում է Նրանց։ Թագաւորը թիկնապահ հրացանաձիգների գնդապետի նշանագրեստ ունի հագած վերնազգեստով, Կայսրուհին մոխրագոյն զգեստով է։ Հասարակապետութեան նախագահի աջ կողմում տեղ են բռնում Թագաւոր Կայսրը, Լաբէն, Բրիսսոնը, իսկ ձախ կողմում Կայսրուհին, Մելիներ։ Պատուանդանները հարակից տեսարան են ներկայացնում։ Սուեզի նախարարը, նոր ստացած Սայիտակ Արծուի շքանշանը կրծքին պատասխանում է ճառ։ «Թագաւոր Կայսր, Ֆրանսիան ցանկացաւ յիշատակարան կանգնել ձեր օգոստափառ Ծնողին—որ կրկին նրա նշանաւոր յիշատակարաններից մէկը։ Կառավարութեան կողմից ուղղում եմ Ձեր Մեծութեան խնդիր ընդունելու այս նուէրն, որ բերում է ամբողջ ազգն, և հանրապետութեան նախագահի հետ միասին դնելու Ալէքսանդր III-ի կամրջի հիմնաքարը, որ պիտի միացնի Փարիզը 1900 թուականի աշխարհահանդիսի հետ։ Այսպիսով այն մեծ քաղաքակրթական գործը որին մենք ձեռնամուխ ենք լինում, կրնանայ Ձեր Մեծութեանց բարձրագոյն հաւանութիւնն և կրկնուի Կայսերուհու ողորմած հովանաւորութեան ներքոյ։ Քարը դնում է և Նոցին Մեծութիւնները մրճով խփում են նրան։ Սրանից յետ Կայսրը առնելով եղեղնից ու ոսկուց շինուած դրիչը, 24 սանտիմետր երկայնութեամբ, բա-

ջավարժ ձեռքով ստորագրում է «Նիքոլայ», ապա տալիս է գրիչը Կայսրուհուն, որ ստորագրում է «Ալէքսանդրա»։ Երբ Ֆօրն էլ ստորագրեց, Թագաւոր Կայսրը ցանկութիւն յայտնեց տեսնելու աշխարհահանդէսի վարչութեան գլխաւոր անձանց։ Հանձնակը վերջացաւ առտահան օրհներգով ու մարշէյլեզը ածելով։ Կայսերական կառքում նստում են նորակոչեալ Մեծութիւնները և հարեւանցին Մեծութիւնների նախագահը։ Կայսերական դրօշակը իջեցնվում է։ Կառախում դրօշակը ուղղվում է դեռապով դէպի դրամատունը։ բոլոր ժամանակ անընդհատ լսվում է ուրախութեան աղաղակ։ Թագաւորն ու Թագուհին ողջունում են ամբոխին։

—

Դրամատոցի առաջ իրենց պատուոյ պահապաններ շարուած են սահմանապահ գնդերի երկու վաշտեր։ Բարձրպտոյն այցելուներին հանդիպում են Եկեմտից Նախարարը, դրամատոցի կառավարիչն և դրամատոցների վերակացուն։ Նախարարի հօմանամայ որդին տալիս է Կայսրուհուն ծաղիկների խուրձ։

Շինուածքի բակը զարդարուած է բոյսերով և դրօշակներով։ Շինուած պատուանդանների վրայ կանգնած են հրաւիրուածները։ Ֆօրի ուղեկցութեամբ Նոցին Մեծութիւնները անցնում են գործարանի սենեակներն, ուր բոլոր մեքենայք գործում են։ Կայսրն ու Կայսրուհին կանգնում են գործիքի առաջ, որ պիտի կտրէր մեդալը։ Նոյն գործիքը 1867 թուին կտրել էր Ալէքսանդր II ի մեդալը, որ նուիրուեց Նորին Մեծութեան ի յիշատակ նրա այցելութեան։ Մեդալը կտրելուց յետոյ Կայսրն ու Կայսրուհին անցան դահլիճն, ուր նախարարը ներկայացրեց նոր կտրած մեդալը կրծքիր կաշի կամ արկղում «Ռուսական Ցարին և Թագուհուն», վերնագրով և Նոցին Մեծութեանց անուանարկումով։

$5\frac{1}{2}$ ժամին Նոցին Մեծութիւնները ժամանեցին քաղաքային վարչութեան տունը։

Առանձնապէս պատրաստած վերնասենեակում սեղանուած էին երաժիշտների և երգիչների խմբերը։ Հենց որ Նոցին Մեծութեանց մօտենալու նշանը գրուեց, բոլոր խմբերին, որոնք միացած էին հերթական յիշով միաժամանակ հնչեցին ռուսական օրհնգին ու ապա մարսէյզը։ Ֆօրը առաջարկեց Թագուհուն իր թեւն և Թագաւորի հետ միասին մտաւ պատուոյ դրահով։ Ամբոխը կռաց, զինուորները զինուորական պատիւ տուին, թմբուկները խփուեցին։ Բոլոր ոտքերի ճառից յետոյ, ամենքը մտան «մէրերի դահլիճը», ուր օպերայի և կոնսերվատորիայի երգիչ խմբերն ու քաղաքային պահպանների երաժշտները ռուսական օրհներգը նուագեցին։ Պատուոյ բակում, որ հայկապ ձմերային պարտէզ էր կարգած, Նոցին Մեծութիւններն անցան նոր զարդարած դահլիճները տեսնելով այն օնիրական վարդան, որ Փարիզին էր նուիրել Ալէքսանդր III Կայսրը։ Տօնախմբութեանց դահլիճում կէսգիշերով ընդունեցին Օպերայի այցելուներին 4000 հրաւիրեալներ։ Ապա տեղի ունեցաւ կոնցերտը։ Թագաւոր Կայսրը քաղաքային խորհրդարանից դուրս գալիս շնորհակալութիւն արաւ խորհրդի նախագահին այն ջերմագին ընդունելութեան համար, որ ցոյց էին տուած Նոցին Մեծութեանց։ Թագաւորն ու Թագուհին քաղաքային տնից դուրս եկան 6 ժամին ու քաղաքութեան կողմից ընդունուցան ուրախ աղաղակներով։ Նոցին Մեծութիւնները և Ֆօրը գնացին զեսպանատուն, ուր ժամանեցին $6\frac{1}{4}$ ժամին։

$7\frac{1}{2}$ ժամին ռուսաց դեսպանատանը, տեղի ունեցաւ բարձրպտոյն ճաշը։ Ներկայ եղողները ֆրակով էին։ Սեղանը առաջին յարկի սենեակներն էր, որ զարդարուած էր բոյսերով և ծաղիկներով։ Նախագահ Ֆօրը եկաւ գեներալ Տուրիէի աջակցութեամբ, շքախումբը կազմում էին կիրակաւորները, նախագահը միայնակ մտաւ ընդունելութեան դահլիճն, ուր նրան դիմաւորեց Կայսրը։ Ճաշի ժամանակ Ֆօրը նստած էր Կայսրուհու աջ կողմում, տիկին Ֆօրը նստած էր Կայսրուհու ձախ կողմում։ Ճաշին ներկայ էին Մելինը, բոլոր նախարարները, պետական քարտուղար Շիշինը, գեներալ Բուլանժէրը, բարոն Մորէնհէյմը, կոմս Մոնտեբելլոն, իշխանուհի Գալիցինը, կապիտան Կազնոն։

Դեսպանատան ճաշից յետոյ, Նոցին Մեծութիւններն բարեհաճեցան թատրոն երթալ, ուր ժամանեցին ժողովրդան անընդատ կենդանիներով 10 ժամին։

Կոնդատուութիւնը և ուրախութիւնը քաղաքի բոլոր մասերում վերին աստիճանի հասան։ Երեկ ամենուրեք խօսում էին «թագաւորի կենաց թասի» մասին։

ՓԱՐԻԶ. — 27-ին. Թագաւորը, Թագուհին և հանդարկապետութեան նախագահը $10\frac{1}{2}$ ժամին գնացին Լուվրի թանգարանը տեսնելու։ Անթիլ բազմութիւնը երկնեց իր ցոյները։ Թագուհին առանձին ուշադրութիւն դարձրաւ հազուագիւտ ժողովածուների վրայ և շատ անգամ բացատրութիւններ էր պահանջում։ Նոցին Մեծութիւնները կանգ առան պետական առանձնարանի և մի քանի պատկերների առաջ։ $11\frac{3}{4}$ ժամին, ժողովրդի ոգևորիչներով վերադարձան դեսպանատուն։

Կէսօրին Նոցին Մեծութիւնները տուին նախաճաշ 60 տոգու, դեսպանատան ծառայողներին և այն տղաներին որոնք նշանակուած են ներկայանալու համար Նոցին Մեծութեանց մօտ։

Թագաւորը կամենում էր այցելել զինուորական ակադեմը, բայց ժամանակի սղութիւնը թոյլ չտուաւ այդ ցանկութիւնը կատարել։

2 ժամին Նոցին Մեծութիւնները կառքով գնացին Սեվր։

Նախագահը դեսպանատուն եկաւ $1\frac{1}{2}$ ժամին քառակի կառքով։ Թագաւորն ու Թագուհին խոյն քաղաքացուն նախագահի կառքում և ճանապարհ ընկան դէպի Վերսայ, շքախումբ ունենալով կերպարներին։ Փարիզի քաղաքային խորհուրդն ուղարկեց ծաղիկների հոյակապ խարտ որ դրուեց կառքում, խուռն բազմութիւն, որ հարուել էր դեսպանատան մօտ, հանդիպեց Նոցին Մեծութեանց ուրախ ցոյցերով։ Նոցին Մեծութիւնը պատասխանում էին գլուխ խոնարհեցնելով։ Սէն-Ժերմենի ծառուղին, համաձայնութեան հրապարակը, Ելիսեան դաշտը, Բուլոնի անտառը ծածկուած էին բազմութեամբ։ Աղաղակները տեղի կենդանի և զօրեղ էին, քան երբ և թէ։ Թագաւորն անընդհատաբար պատասխանում էր Փարիզցիների հրաժարական ողջոյններին։ Թագուհին ուրմամբարար գլուխ էր տալիս։

Թագաւորը յոգնած Փարիզի ապրանքների նուիրից 100,000 ֆրանկ։

Թագաւորը հրամայեց ոսկեայ պնակ պատրաստել Կարնոյի զերեզմանի վրայ դնելու համար։ Պնակը կրնենայ հետեւեալ վերնագիրը։

«Կարնոյին Նիկոլայ II-ից։

$2\frac{3}{4}$ ժամին Նոցին Մեծութիւնները հասան Սեվր և մեծ ցոյցերով ընդունուեցին խուռն բազմութիւնից։ Քաղաքը շատ զեղեցիկ կերպով զարդարուած է։ Նոցին Մեծութիւնները այցելեցին յանճապակի գործարանը։ Թագաւորը կրակ վառեց թրծելու հնոցում, որից յետոյ գնացրը ուղղուեց դէպի խանգարանը, ուր Նոցին Մեծութեանց ներկայացուցին մի քանի իրեր։ 20 ոսկէից յետոյ գնացրն առաջ շարժուեց Սէն-Կլուի պարտէզով։

Փարիզից մինչև Վերսայ բոլոր ճանապարհը յարդեցեալ գնացրի էր նմանում։ Սեվրի գործարանի մուտքի դիմաց շինած էր դռան և նիշտակ մեծաքանչ ծաղկից ոսկէ ծոլերով։ Ծաղկոցի վրայ ծածանվում էին ռուսական և ֆրանսիական դրօշակներ։

Թագաւոր Կայսրը քաղաքային պահպանների ամբողջ վաշտին, որ կազմում էր պատուոյ պահնորդ, շքանշաններ շնորհեց։

Նոցին Մեծութեանց Փարիզից դուրս գնալու ժամանակ ժողովուած բազմութիւնը հասաւ ահագին քանակութեան։ Ճամբերը առատօրեան 7 ժամից սպասում էին, որ վերջին անգամ կարողանան ողջունել Թագաւորին և Թագուհուն։ Երբ երեսում է շքախումբը, լսվում են որոտաձայն ուրախ «ուռա» աղաղակները։ կանայք թաշկինակներ են ծածանում, գոչելով «յաւիտենութիւն Թագուհի», կառքերը ծածկվում են ծաղիկներով։ Place de la Concorde-ում հարիւր հազարաւոր բազմութիւնը անընդհատաբար գոչում է «ուռա»։ Ռուսիկանութեան բոլոր ջանքերը բազմութեան խառնուելու առաջն առնելու համար զուր են լինում։ Ելիսեան դաշտում բազմութիւնն ուելի և ուելի ծանրանում է, արհեստաւորները շարժում են իրանց գլխարկները «կեցցէ Ցարը» գոչելով, կանայք ձեռքերի վրայ բարձրացնում են մանուկներին։ Թագուհին ժպտում է, Թագաւորը գլուխ է տալիս։ Արեւակը փառաւորապէս փայլում է լուսաւորելով հոյակապ տեսարանը։ Հրապարակում նոյն ոգեորութիւնն է։ Բուլոնի անտառում ծառերը ծածկուած են մարդկանցով։ Թագաւորն ու Թագուհին շատ զգացուած են։ Նախագահ Ֆորն ուրախութիւնից փայլում է։

* * *

Այս տարի մեր երկրում գինեաւաբաղարութեան պէտք է ենթարկուեն 19,439 երիտասարդ. սոցանից զինուոր պէտք է գտնուեն Թիֆլիզի նահանգում 899 ընկեր և 113 ոչ-ընկեր, Երեւանի նահանգում 745 ընկեր և 12 ոչ—ընկեր, Գանձակի նահանգում 360 ընկեր և 12 ոչ-ընկեր, Կարսի նահանգում 41 ընկեր և 45 ոչ-ընկեր, Բաքուայիսի նահանգում 1,165 ընկեր և 8 ոչ—ընկեր։

* * *

Սեպտեմբերի 27-ին, երեկոյեան 6 ժ. 15 ր. Թիֆլիզի նահանգական դատարանը յայտնեց Թիֆլիզի վարկի ընկերութեան մէջ տեղի ունեցած զեղծումներին վերաբերեալ իր դատավճիռը։ Այս դատավճռի զօրութեամբ իշխ. Ն. Ամատունին յանցաւոր է ճանաչուած, որ վարելով Թիֆլիզի բաղաքային վարկի ընկերութեան նախագահի պաշտօնը, ոչընչացրել է 1890-թուից սկսած մինչև 1892 թիւը վերատուեալ մի քանի իսկական վաւերագրեր և տեղը դրել է յետին թուով կազմած նոր վաւերագիր, և այս յանցանքի համար իշխ. Ամատունին դատապարտուած է բոլոր առանձին իրաւունքներից զրկուելուն և 12 տարի ժամանակով Տօբոլսկի նահանգն աքսորուելու։ Ամբաստանեալը յանցաւոր է ճանաչուած, որ սեփականել է իրան յանձնաժողովութեամբ այն գումարները, որ իրան մասնաւոր կերպով յանձնուած էին բանկին հատուցանելու համար և դատապարտուած է բանտարկութեան չորս ամիս ժամանակով։

Մեղադրանքի նրանց վրայ բարդուած մնացեալ բոլոր կէտերի նկատմամբ դատարանը որոշեց ան մեղ ճանաչել և դատապարտեալ արդարացուած համարել նոցա։

* * *

Մեր յայտնի մանկավարժ Ս. Սեղբակ Սանդինեանը հրաւէր ստանալով Գէորգեան ճեմարանի վարչութիւնից ընտանեկան հոգեբանութեան և տրամաբանութեան դասերը, այդ զեկավարելու վարժոցի ուսուցչաց պարապմունքը երեկ սատանելուց յետոյ, վերջ ի վերջոյ, ճեմարանի վարչութեան կրնակի ինդիրքը չկամենալով մերժել—այսօր սեպտեմբերի 29-ին ուղեւորվում է իր պաշտօնատեղին Ս. Էջմիածին։

* * *

Այն յատուկ մասնաժողովը, որ հաստատուած է Փարիզի 1900 թ համաշխարհային հանդիսում ռուսաց բաժին կազմակերպելու համար, կրկին իր զարդարմունքները նոյեմբերի սկզբից։ Առաջին ինդիրներից մէկը որ պէտք է վճռէ այս մասնաժողովը այն է թէ արդեօք հարկ է ռուսաց բաժնի համար մի առանձին պավիլիոն կառուցանել թէ ռուսաց արտադրութիւնները նպատակայարմար է ի ցոյց հանել ֆրանսիական շինութեանց մէջ։

* * *

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ տէրութիւնը մտադիր է մի միջնակարգ երկրագործական դպրոց հաստատել։

* * *

Տէրութեան շրջաններում խնդիր է յարուցուած հոգնորականութեան ստանալն ներկայացուցիչներին ծաղկի պատուաստման արուեստ ուսուցանելու մասին։

* * *

Նիժնի-Նովգորոդի համառուսական ցուցահանդիսին ընդամէնը 5926 պարգև է բաշխուած։

ա. Պետական զինադրոշ իրանց արդիւնաբերութեանց վրայ նկարելու իրաւունքը ստուած է—255 անձանց։

բ. Առաջին կարգի զեպլոմների արժանացել են . . . . . 257։

գ. Ոսկէ մեդալների . . . . 470։

դ. Երրորդ կարգի զեպլոմների . . 407։

ե. Արծաթեայ մեդալների . . . 997։

զ. Երկրորդ կարգի զեպլոմների . 278։

է. Բրոնզէ մեդալների . . . 1,237։

ը. Չորրորդ կարգի զեպլոմների 354։

թ. Գովասանական վկայութեանց. 1,441։

ժ. Դրամական պարգևների . . 320։

Արդ այս բոլոր պարգևներից կովկասի էքսպօնենտները արժանացել են.

ա. Պետական զինադրոշի . . 3։

բ. Առաջին կարգի զեպլոմի . . . 11։

գ. Ոսկէ մեդալների . . . . 11։

դ. Երկրորդ կարգի զեպլոմների . 14։

ե. Արծաթեայ մեդալների . . . 35։

զ. Երրորդ կարգի զեպլոմների . . 14։

է. Բրոնզէ մեդալների . . . . 33։

ը. Չորրորդ կարգի զեպլոմների . . 22։

թ. Գովասանական վկայութեանց . 63։

Ընդամենը կովկասցիք ստացել են 206 պարգև, որ կազմում է բաշխուած պարգևների ընդհանուր թուի 3,5%։

* * *

Երեւանի նահանգական դատարանում, ինչպէս գրում են «Տիֆլ. Լիստոկին», անցեալ շաբաթ քննուեց այն 17 անձանց գործը, որոնք մեղադրվում էին կեղծ թղթադրամ շինելու եւ տարածելու յանցանքի մէջ։ Այս խմբի պարագլուխն կազմակերպողը եղել է Գանդզայի նահանգի գիւղացի փորագրիչ (craveur) Բաբին։ Գործի քննութիւնը դատարանում տեւեց մի քանի օր, որովհետև անգամի թուով վկաներ էին կոչուած։ Նահանգական դատարանը մեղադրեալներին յանցաւոր ճանաչելով դատապարտեց՝ Բաբին տասնամեայ աշխատանքի վեց տարի ժամանակով, իսկ մնացեալներին Սիբիր աքսորելու մի՝ և աւելի տարիներով։

* * *

Ինչպէս երեւում է ներկայումս թուրք հպատակներն էլ սկսել են մտնել հայերի հետ լուսաւորութեան հովանաւորելու ասպարիզում... «Պասլին» հաղորդում է որ Բազուայ հարուստ թուրք Զամսի Ասադուլաեվը ստանձնել է Թիֆլիզի Աղէքսանդրեան ուսուցչական սեմինարի հոգաբարձուի պաշտօնը։

* * *

Կարսի Նորահասատ պարսկական փոքր հիւպատոս Միրզա-Զաքարը, որ երբեմն պարսկական լրագրների թղթակից էր, ուղեւորվում է այսօր, ամսոյս 29-ին Թիֆլիզից իր պաշտօնատեղին։

* * *

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

(Նամակ խմբագրութեան)

—

Թիֆլիզում հայ դերասանական ընկերութիւնը իրանից անկախ պատճառներով դադարեցրել է իւր ներկայացումները մինչև ցնոր անօրէնութիւն։ Պատճառը, ինչպէս մեզ հաւատացնում են ազնուականաց թատրոնի ներկայացուցիչներն են, որոնք ոչ մի պայմանով չեն ուզեցել տալ հայ խմբին իրանց սովորական հինգշաբթի օրերը և դրա փոխարէն առաջարկել են բացառապէս Թարս երկուշաբթի օրերը։ Հայ դերասանական խումբն ես նկատելով այդ օրուայ անյարմարութիւնը և անխուսափելի վնասը բարեաբէ համարել դադարեցնել ներկայացումները, չնայելով որ խումբը միանգամայն պատրաստ է եղել համերաշխ ընկերական պայմաններով յարաջ տանել անցեալ տարուայ նման ներկայ սեզոնն էլ։

Իսկ մեզ զարմանալի է թվում թէ ինչ նշանակութիւն ունի հինգշաբթի օրը ռուսաց խմբի համար, քանի որ նրանք հարիւր ռուբլուց ուելի մուտք չեն ունենում, մինչդեռ հայերը միմիայն տկրը թատրոնին վճարում են գիշերային վարձ հարիւր երեսուն ռուբլի չհասնող հանդիսարանների համար յատկացրած սասնական կուպէկները, ընդամենը մօտաւորապէս 200 ռուբլի։

Զաւ ցաւալի է։ Վաթսուն հազար հայ ժողովուրդ ունեցող քաղաքը տեղ չունի ներկայացումներ տալու։

Ներկայումս դերասանական խումբը ձեռք ծալած չգիտէ թէ ինչ անէ. ամբողջ հօմին ամիս պարապ մնալով երեւի այս ձմեռն էլ պարապուր է օդ կուլ տալով այս և այն կողմը թափառել։

Ար—նց։

Սեպտեմբերի 27.

* * *

ՂՈՒԲԱՅՈՒՄ մի ազանագին գրադարան կար հիմնուած Մերզա-Մահմեդ Ալի Կասիմովի նախաձեռնութեամբ։ Եւ ահա մօտ մի ամիս առաջ այս պարոնը վախճանվում և նրա հետ միասին վերջ է գտնում նաև գրադարանի գոյութեան, որովհետև տեղական մահմեդականների մէջ չի գտնուում ոչ մի մարդ, որ յանձն առնէր գրադարան վարելու պաշտօնը։

* * *

ԱՍԽԱԲԱԴ, 21 սեպտեմբ.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Ահա վեցերորդ տարին է, որ պ. Տէր-Մկրտչեանցը վարում է երեսփոխի պաշտօնը Ասխաբադի հայոց եկեղեցում։ Այդ վեց տարուայ շրջանում, ոչ մի անգամ հաշիւ ներկայացրած չէ հայ հասարակութեանը։ Պ. Տէր-Մկրտչեանցը ինքը հարուստ է և տեղիս առաջին կարգի վաճառական է, հայ հասարակութիւնը մեծ վստահութիւն ունի նրա վրայ։ Լուր է տարածուած, իբր թէ երեսփոխը և ժամանակաւոր ծխատէր Խաչատուր քահանան, իրանց մէջ առանձին հաշիւ են տեսել և ուղարկել են հաշտարարների կոնսիստորիա...

Տեղիս բարեկրօն Խաչատուր քահանան մեր. միայն թէ այս երկնաբազաքացի ծնունդ ներսիսեանց ազգ՝ աղճատեալ յանդգնութեանէ անարժան Առաջնորդաց, ի լոյս պայծառապայծ վերակենդանացեալ խնամարկութեամբ նորին իսկ ճարտարապետի և զեղինակի ազգային սիրաղործութեանն։

«Ցուզարկելով առ Վեհափառ Եպիսկոպոսապետ զանօրութեան մերոյ ուսումնական վատակ՝ զարգարեալ գնակաս նորուն Զերով շնաշխարհիկ անուամբ. պաշեմ զմեզ՝ հաշտ տեսամբ հայիլ ի պատարագ Զերոյ որդեգրի։ Նոյն և եմ և եղէց անփոփոխ առ Զեզ սիրով և ակնածութեամբ՝ Վեհափառ Հայրապետիդ և մարդասէր Հոգոյ խոնարհ ծառայ Ս. Նազարեանց։ ի 14 սեպտեմբերի 1846 ամի. ի Դաղան։ Հասցէն իմ՝ Въ домѣ переплетчика Нессина, въ(?) университетской улицѣ, въ Казань.»

Որքան մեզ յայտնի է, Ներսէսը այս նամակն էլ թղթեց առանց պատասխանի։

Նազարեանցի բոլոր վերոյգրեալ գրութիւնները, Ներսէսի մակագրութեամբ ճակատներին, պահուած են Ս. Էջմիածնի վիճարանի դիւանում։

Աղէքսանդր Երիցեանց

պոպա, և ոսոպեաց դանոսիկ արեամբ իւրով և քրտամբք։

«Կարի քաջ և ողջամիտ է դատողութիւն Անդ մեծի՝ նախագահ ի զգրութեանցն ասենի՝ երկնաբազաքացի ուսմանց Ուրբ Գրոց լինիլ, առանց որոց սիրալ և ունայն՝ վիճութիւնք և ջանք մարդկային։ Զասացեալսդ վեհ և անհերքելի ճշմարտութիւն վկայութեամբ ապացուցանեն ամենայն ցուցակք դասատուութեանց որ ի համալսարանս զերմանիոյ, ուր սասուածաբանական գիտութիւնք և վարդապետք գնահագանն ունին զանեղ, որոց ապա հետեւին բժշկական, իրաւաբանական և փիլիսոփայական մակացութիւնք յանքան և յանհամար ճիւղս և ոստս բաշխեալ և տարածեալ։ Ոսկի են բանք Զեր և անանց, թէ որ ուղղութեամբ խորսիել փարդկային ուսմունս ի վերայ հիման Աստուածայնոյն, առանձելոյ մեզ բերանով առաքելոյ և մարգարէից, որով միայն հրնարաւոր է արդասաւոր առնել զառաջինն և աղբիւր բարեբասութեան ազգս Հայաստանեայց աշխարհի։

«Զի բարի կամ զի վայելուչ, զի մարդասիրեալ է վեհապատիւ Հայրդ՝ ասայպայս ի կիր ածել զնս իբրև գործարան մեծամեծ Զերոյ առաջարկութեանց որ ընտ մասին ազգային լուսաւորութեան։ Փառք և երանութիւն համարեցայց անձին իմում ընդ քաջդ հանմանու ականուոր Աղգասիրիա թարիլ զեիդն յօգուտ և ի պայծառութիւն Հայրենեաց։ Քաղցրը եղիցի տառապելոյս զոհել առ սեղանով Հայրենեաց զոր յիսն։ Ի յաւէտ պատուավանդունդ՝ կարդութիւնք մերոց և սրտի։

—

«Տէրութիւն ռուսաց, ասի ի նամակի Զերում, կարեւոր համարի հիմնել Ասիական ինչ ուսումնարան *) ի մայրաքաղաքի, ուր ցանկալի երեւի Հայրենասիրաց կարգել իմ ուսուցիչ Հայոց զրպրութեան. բայց եթէ որ եղիցին արտօնութիւնք այպիսոյ գործոյ, և որ պայմանք որ ի նմա պարտաման,—զայսմանէ նշանակեք ինչ ոչ։

«Ուրախ ընդ այն յոյս արժանաւորելոյ տեսանել զհայրդ պատուական ի Պետերբուրգ՝ թէ յինչ հիմնեալ իցէ, ան գիտանամ բնաւ, մանաւանդ զի կրթեալ գոս յոյժ ամենայն միջոցաց՝ առ այդ կարեւորելոց, և չի տեսանի ի միջի փոփոխութիւն ինչ իմոց պարագայից։

«Ազաչեալ զՏէրութիւն Զեր ընկալուցուս զոս ի խորոց սրտի շնորհակալս վասն բարեմտութեանց Վեհապատիւ Հայրապետիդ յարգոս իմ և ամենայն ի մոյ՝ նոյն և մատուցանելով Զեզ զերկուսանք մեր ողջոյն յարգանաց, եմ և եղէց պատկառ ակնածութեամբ բարեբաղդ որդի Զեր և ծառայ Սանփանոս Նազարեանց։ ի 10 մարտի 1844. ի Դաղան»։

Այս նամակին երկար ժամանակ պատասխան չտանալով, Նազարեանցը 1846 թուի սեպտեմբերի 14-ին գրեաց գրեց Ներսէսին հետեւեալը՝

«Վեհափառ Գրիգորիոսի հայոց Տեսուչն Ներսէսի ի Ս. Նազարեանց ողջոյն պատկառ

«Անցանեն տարիք ամք չորք, յորմէ հետէ զեզերիմ զանդիսութեամբ յանմեղութեամբ վայրս Դաղանու՝ հեռի ի հայրենի աշխարհէ և ի մերոյոց, այլ և որ ցաւալին է յաւէտ՝ անօգուտ միրտեռ ազգի։ Բայց և այնպէս՝ որչափ ինչ նեղէ մեզ տառապալից կեցութիւն մեր ասա,և զի այսմ վիճակեցաք պաշտաման, ոչ դանդաղիմք ըստ մարթելոյ մշակել զանդաստան հայոց գրչութեան առ ի տալ միջոցս ծանօթանալոյ ընդ մեզ յիմանալեացն մասին և Ռուսաց, եթէ կամ ինչ էր սոցա առ վայր մի ուրանալ զկուրացուցիչ ազի ամբարհաւատութեան և արժանաւորել մատչութիւն իմիք գուսումնական արդիւնս և զարգանս հայկազեան հնութեան, որ ինչ տարակուսական միշտ ինձ տեսանի։ Ի հարկէ և զմեզ իսկ՝ եթէ ներեսցի ինչ էր խօսիլ արդարութեամբ և ոչ տալ խարել զմեզ ազգային անձնասիրութեան, չէր մարթ թողուլ ամենեին տարամբաս։ Ոչ ճանաչին ռուսաց զմեզ ազգերանայ անտի, զի Հայոց ի Ռուսասանեայց աշխարհի չեն տակաւին հեղինակք այնպիսիք, ոլորաւական էին՝ ուստեղ ազգասիրութիւն ի սրտի և զրիչ ճարտար ի ձեռին՝ կէս մի ի լոյս հրապարակի հանդիսացուցանել զուսումնական արդիւնս Հայկական ոգւոյ, և կէս մի զազգն Հայոց՝ որ դեգերի տակաւին ի խաւարի տանջանաց՝ պայծառացուցանել գիտութեամբք և արուեստիւք։ Ասացի՝ թէ չեն մեզ հեղինակք այսպիսիք, և այս բնական յաւէտ, վասնզի չէք պաշտպան և ժողովոյ այսպիսեաց, և ուր չէ պատուական արուեստ, ծագկի և ոչ։ Quibus honor habetur nullus, jacent. կիկերոն ի ճառս Տուսկուլանեան։ Իմ ձեռն և բերան փակեալ են, վասն զի զոլով այլ պաշտաման առ զան օտարին և տառապեալ ամենուստեք, պարտական եմ անհրաժարելի իմն պաշտել ոչ զոր պիտանի են մեզ և կարեւոր մերոց ժամանակաց, այլ զոր պահանջելոյն պիտոյք բանի մի Ռուսաց՝ ինձ աշակերտելոց։ Աշխատասիրեալքն իմ յօգուտ մերոյոց անդիտան են և կացցեն միշտ յաչս տիրութեան, որ յանձն ապարքէն և առ իբրեն տակաւանամ տեսանի, թող զայլոցն և զօտարին զոր յաջողիլ և ծաղկեցուցանել չէ ինչ փոյթ, այլ մանաւանդ և ընդդէմ Ռուսաց՝ քաղաքագիտութեան։ Կործանել զայլոցն և չինել զիւրսն. անհատասիրէ նկրտումն հանապազօրեայ. և զի Ռուսաց ընդ Հայոց պայծառութեան եթէ Հայք իսկ՝ զանգատեալ զհետ փառաց և տրամաբանութեան զոսմանէ՝ ամենայն զայսմանէ լինին։

«Ցաւ է ինձ մինչ ի սպառ ոչ զօրել յանախագոյնս նամակիսօս ընդ Վեհափառ Կաթողիկոսիդ լինել, զի կասկածիմ ձանձրացուցանել Զեզ՝ զամենարեանն. այլ մեծամեծ. հոգովք և զօրծանութեամբք, որ ըստ Հայրապետական Աթոռոյ։ Բայց համարիմ՝ եթէ այդ ամենայն այս կարեւոր և մեծակշիռ առ ի բարեկարգել և տնօրինել զհոգեւորս, յորոց կախ են և աշխարհական. բայց և իմանալիքն և խորհրդակցութիւնք ի սոցունց սակի ոչ ի փոքունց տպաքէս։ Զայս քաջ իսկ զիտեն և խոստովանին իմաստուն միաբ Զեր՝ որոց յաւէտական արդասիք Դպրոցն Ներսիսեանդ մեծագարար քարոզի տակաւին յանէն մեր. միայն թէ այս երկնաբազաքացի ծնունդ ներսիսեանդ ազգ՝ աղճատեալ յանդգնութենէ անարժան Առաջնորդաց, ի լոյս պայծառապայծ վերակենդանացեալ խնամարկութեամբ նորին իսկ ճարտարապետի և զեղինակի ազգային սիրաղործութեանն։

«Ցուզարկելով առ Վեհափառ Եպիսկոպոսապետ զանօրութեան մերոյ ուսումնական վատակ՝ զարգարեալ գնակաս նորուն Զերով շնաշխարհիկ անուամբ. պաշեմ զմեզ՝ հաշտ տեսամբ հայիլ ի պատարագ Զերոյ որդեգրի։ Նոյն և եմ և եղէց անփոփոխ առ Զեզ սիրով և ակնածութեամբ՝ Վեհափառ Հայրապետիդ և մարդասէր Հոգոյ խոնարհ ծառայ Ս. Նազարեանց։ ի 14 սեպտեմբերի 1846 ամի. ի Դաղան։ Հասցէն իմ՝ Въ домѣ переплетчика Нессина, въ(?) университетской улицѣ, въ Казань.»

Որքան մեզ յայտնի է, Ներսէսը այս նամակն էլ թղթեց առանց պատասխանի։

Նազարեանցի բոլոր վերոյգրեալ գրութիւնները, Ներսէսի մակագրութեամբ ճակատներին, պահուած են Ս. Էջմիածնի վիճարանի դիւանում։

Աղէքսանդր Երիցեանց

նայ Փանեանցը, համաձայն իւր խնդրի ու օրագրութեան սինոգի, փոխադրվում է Ղուրայ քաղաքը. Ասխարադի հայերի համար հարկ է ընտրել մի արժանաւոր անձ և առաջարկել հոգևոր իշխանութեան ի ձեռնադրութիւն։ Սինոդը հրամանագրել է հաշտարարխանի թեմական մի ժամանակաւոր քահանայ ուղարկել Ասխարաթ հովուելու մինչև նոր քահանայացուի ընտրութիւնը և ձեռնադրուիլը։ Ասխարադցիք աչքի առաջ ունեն պահանջելու երկրորդ քահանայ, որովհետև մէկը բաւարարութիւն չի տալ։

Անցեալ ամսին տեղիս եկեղեցւոյ գաւթում հայ հասարակութիւնը իւր միջից ընտրեց քաղաքի համար տանուտէր կամ պատգամաւոր, պ. Աւետիս Աղաթանցին, իսկ սրան օգնական պ. Ց. Զէրքէզեանցին. երկուսն էլ վայելում են հասարակութեան յարգանքը։

Երկար ժամանակ էր, գաղութների մէջ, միաբ էր ծագել մի նոր եկեղեցի շինել Ասխարաթում, միաբը իրագործուեց, յատակագիծը շինել էր տեղիս զինուորական ճարտարապետ պ. Ց. Ց. Մուխաֆեանցը, չէնքի վրայ պիտի ծախսուէր 17,000—20,000 ռուբլի։ Ցատակագիծը ուղարկուած է հոգևոր իշխանութեան ի հաստատութիւն. ինչ ինչ պատճառով նոր եկեղեցու շինութիւնը յետաձգուեց, նրա տեղը նորդում են հին եկեղեցին, որի մօտ շինվում է մի գեղեցիկ զանգակատուն, արևմտեան դռան կողմից. վրան մտնվում է 2000—2500 ռուբլի, շինութեան վրայ հսկողն է պ. Մուխաֆեանցը։

Զուլում։

* * *

ՄԻ ՕՐ ԲԱԳԻՈՒՄ

Սեպտեմբերը նոր էր սկսվում. երկինքն ամպամած էր, և վերևից շարունակ տեղում էր աշնանային մանր անձրևը։

Նաւթային մայրաքաղաքը՝ աշխարհահռչակ Բագուն արտասովոր հրճուանքի մէջ էր։ Վերջապէս անցել էին ամառուայ հեղձուցիչ անտանելի շոգերը, և մարդիկ, կարծես, կաղդուրուած, վերսին շունչ ու կենդանութիւն առած, զուարճամտիլ ու աշխոյժ գէմքերով լուռ ու մունջ շտապում էին իրանց գործերին։ Խաղաղ էին մարդկանց սրտերը, խաղաղ էր բնութիւնը, և մշտայոյզ ծովը՝ կատաղի Կասպին ընդհանուր ներդաշնակութիւնը չխանգարելու, մարդկանց սրտերը չվրդովելու համար, կասես, ինքն էլ լռել խաղաղուել էր։

Միայն վիթխարի շոգենաւերի ահռելի մռնչոցը, երկաթուղու սուլոցը և Սև քաղաքի կողմից ամպի նման բարձրացող ծխի անվերջ քուլաներն ապացուցանում էին, որ մարդը՝ բնութեան շունչ ու եռանդ ներշնչող այդ բանական արարածը չէ նիրհում, այլ լարած իւր երկանդարգև ոյժերը և իւր երկաթի կամքին հնազանդեցրած ծովն ու ցամաքը, երկաթն ու գոլորշին՝ գործում է անդուլ, գործում է ի բարօրութիւն իւր ընկերի...։

Զատկում եմ դէպի ծովափը. պատահում եմ վաղեմի ընկերներիս մէկին։ Ցայտնի է, թէ օրքան մեծ ու անկեղծ է լինում մարդու ուրախութիւնը, երբ նա մի առժամանակեայ անջատումից յետոյ կրկին անգամ տեսնում է իւր պաշտօնակից ընկերին, մանաւանդ մի անծանօթ երկրում։

Սովորական հարց ու բարևից, մօտիկ անցեալի մասին յիշողութիւններս ու տպաւորութիւններս բաժանելուց յետոյ, մեր խօսակցութեան նիւթը փոխուեց ընդհանապէս օրուայ հարցի՝ հացի խնդրի մասին։

Այս, կեանքի պոէզիան շուտով պրոզայի է փոխվում, երբ խօսք է լինում օրուայ չարիքի, ուտեստի և ապրուստի մասին։

—Ո՞րքան ժամանակ կըլինի այստեղ գալդ և ինչ գործով ես պարապում այժըմ, հարցրի ես կարճ լռութիւնից յետոյ։

—Երկու ամիս է, որ այստեղ եմ, բայց դեռ անգործ եմ, պարապ-սարապ թափառում եմ փողոցէ փողոց, դիմում եմ սրան, դիմում եմ նրան և ամեն տեղ մերժումն ստանում. ժամանակները դառնացել են և մարդկանց սրտերը ցամաքել, քարացել. մեզ համար այս աշխարհում այլ ես ոչինչ վայելչութիւն չի մընում, բացի... նրա ձայնը կմկմաց, երեսի գոյնը թռաւ և նա այլ ես չուզեց շարունակել։

—Մ՚թթէ մեր խեղճ ուսուցիչների ապրուստ ճարելու, իրանց ճակատի քրտինքով իրանց հալալ հացը ճարելու բոլոր միջոցները հատել են. մ՚թթէ վերջապէս մեր հարուստներն էլ են կորցրել իրանց կարեկցութիւնը դէպի թշուառ հայ վարժապետի ցաւալի վիճակը, որ աւելի քան յուսահատական է, անմխիթար է, ապա այլ ես ուր է մնում դիմել նրանց, աւելացրի ես. մ՚թթէ նրանք չեն երգել և չեն ողբորուել անմահ բանաստեղծի սուրբ խօսքերով.

«Ցուր ինձ ձեռքդ, եղբայր եմ մենք...

—Թող, ի սէր Աստուծոյ, թող դու այդ զգացմունքներն ու գաղափարները. նրանք այստեղ վաղուց կորցրել են իրանց գինն ու արժէքը, մարդկանց սրտերը քարացել, ապառաժ են դարձել։ Բագուում մարդկանց սրտերն ու մտքերը յուզողն ու ոգևորողն անարդ գեղին ոսկին է միայն և այս ունայն աշխարհի սին փառքն ու մոլութիւնները. . . Նա փոքր կանգ առնելով, շարունակեց.

—Անցեալները մի շնչին բան և հինգ մանէթանոց տեղ էր բացուել. գնացի խնդրեցի, որ ինձ առնեն։ Է՜հ, ամսական մի քանի մանէթ առն կուղարկէի, ծերունի ծնողներիս, մնացածով էլ մի կերպ ինքս կապրէի։ Դուրս եկաւ պարոն խոզէինը և արհամարհական ձևով ասաւ. «Գիտեմ պաշտօն ես ցանկանում, բայց ձեզ համար մենք տեղ չունինք. մեր վարժապետները արիստոկրատներ են. «ես աղա, դուն աղա, մեր աղունն ով աղայ»։ Նրանք անընդունակ են աշխատելու, և իմ համոզմունքով նրանց գործ յանձնելը կատաբեալ յիմարութիւն է»։

Այս խօսելիս նրա այտերը անբնական կերպով կարմրել էին և շրթունքները դողդողում. երևի, նրա մէջ մի ինչ որ ներքին պատերազմ էր մղվում։

Մենք մնաս բարեաւ ասինք իրար ու հեռացանք շուտով տեսնուելու յոյսով։

—

Կէսօրից յետոյ գորշագոյն ամպերն հեռացեալ սկսել էին բարակել, նօսրանալ։ Իրիկնադէմին արդէն տեղ-տեղ երևում էր կապուտակ պայծառ երկինքը։ Արեգակը մօտենալով իւր մուտքին, վերջին անգամ իւր հորիզոնական ճառագայթները ձգեց քաղաքի, ծիրանի ծովի, բարձրակայմ նաւերի ու եկեղեցիների վրայ։ Ամենից առաւել փայլում էր ռուսաց նորակառոյց, իսկապէս հրաշակերտ ճարտարապետութեամբ շինուած, եկեղեցու հսկայական կամուրջկէի գլուխն ոսկեփայլ խաչն իւր վիթխարի գնդով, որ կարծես թագաւորում էր ամբողջ քաղաքի վրայ...

Նորեկ մարդու համար Բագուում հետաքրքիր ու դիտելու արժանի տեսարաններ շատ կան, բայց ես վճռեցի այդ երեկոյ, Մարդասիրական Ընկերութեան փառաւոր գրադարան ընթերցարանն այցելելուց յետոյ, եկեղեցի մտնել։ Հայ մարդը սովորաբար օտար տեղ գնալիս ամենից առաջ եկեղեցի է գնում...

Մտնում եմ եկեղեցու գաւիթը. դեռ փոքր ինչ վաղ էր. քիչ հեռուն երևում էին մի խումբ ծերեր, նրանց մօտ ծառի տակ նստոտած էին տասի չափ զինուորներ հասակի ու սեռի տարբերութեան գաղթականներ ցնցոտիների մէջ փաթաթուած. փողոցի կողմով, գաւազանը ձեռին, փառաւոր շորեր հագած, ճեմում էր փառաւոր միրուքով մի չաղլիկ քահանայ։

Հարաւային կողմի ասպիճաններով վերև բարձրացայ և այն է, որ ուզում էի ոտս եկեղեցու շէմքից ներս դնել, տեսայ որ, գրան մուտքի մօտ երեսի վրայ ընկած է մի կիսամերկ երիտասարդ։ Սկզբից ինձ այնպէս թուաց, թէ դա եկեղեցու ժամարն է, որ պատահմամբ կամ հարբած լինելով ընկել ու քունը տարել է։

Ես հէնց այդ մտածմունքին էի և պատրաստվում էի նրան զարթնացնել, որ ծերերից երկուսը նկատելով այդ, շտապով մօտեցան և առանց երկար ու բարակ նայելու, հարցնելու՝ երկու կողմից բարձրացրին նրան ու ցած բերելով ասպիճաններից տարան եկեղեցու հաւի կողմը, երևի ժողովրդի աչքից հեռացնելու նպատակով. հաւանական է, որ այդպիսի բաները շատ սովորական են Բագուի համար, որովհետև դա ոչ ոքի ուշադրութիւնը չգրաւեց։

Ես հետաքրքրութիւնից դրդուած՝ քայլ առ քայլ հետևեցի նրանց։

Բարձրահասակ պատանին, որ հագիւ բան և հինգ տարեկան կըլինէր, մի քանի քայլ առաջ գնալով, ջղային սաստիկ ցնցումն ստացաւ, նրա ծնկները դողդողացին, ծալ գնացին, և նա իսկոյն գետին կըփռուէր, եթէ ես շուտով ծերերին օգնութեան չհասնէի։

—Ա՛յ աղա, դու ո՞րտեղ ես ապրում, ասացի ո՞րտեղ է, որ դու մնացել ես այս ցեխերի մէջ քաշ գալիս. հարցրաւ ծերերից մէկը։

Երիտասարդը ոչինչ չհասկացաւ, նա միայն գլուխը բարձրացրաւ, դժգոյն աչքերը չռեց դէպի մեզ և մի քանի անգամ ապշաբար նայեց իւր շրջապատողների երեսին։ Նրա անհասկանալի հայացքը թափառում էր մէկ առարկայից դէպի միւսը, երևի խեղճ զոհի նեարդային համակարգութիւնն իսպառ քայքայուել էր, և նա կորցրել էր կամքի ոյժը։

—Դու ո՞րտեղ ես ապրում, ձեր տունը ո՞րտեղ է, դարձեալ պնդեց նոյն ծերունին։

—Մեր տունը... Ա՛ղզրում է... Կասես, անգիտակցաբար և մեծ դժուարութեամբ արտասանեց նա այս մի քանի բառը, և կրկին ուշաթափ լինելով գլուխը խփեց գետնին։

—Սրան պէտք է հիւանդանոց ղրկել, ասին բարեհոգի ծերերը. և մեզ եկեղեցի, որովհետև ժամերգութիւնն արդէն սկսուել էր։

Այդ սրտակուռ ու աղեխարշ տեսարանն անթարթ աչքով դիտում էին ծառի տակ նստած տաճկատանցի գաղթականները. նրանք տեսնելով, որ ես մենակ մնացի և կարեկցաբար աշխատում եմ օգնել թշուառ հիւանդին, մօտ եկան։

—Բարի աջողո՞ւմ, արեւուդ դուրքան. համարեա միաբերան արտասանեցին սփոփանքի կարօտ գաղթականները։

—Աստուծոյ բարին, բարի՛վ ձեզ, պատասխանեցի ես. դուք չգիտէք արդեօք մի է այս հայրենազուրկ օտարականը, որ մահամերձ ընկած այս գետնի վրայ, անտէր ու անտիրական հառաչելով՝ իւր կաթոգին հայրենիքի սիրատուչոր կարօտն է քաշում։

—Դա մարդումցի է, հարուստ օջախի որդի. Բագու եկաւ ամրան սկզբներին. այն ժամանակ նա ժիր ու քաջառողջ տղամարդ էր, իսկ հիմա տեսէք, ինչպէս մաշուել ու ծիւրուել է...

—Երևի, դուք էլ մարդումցիներ էք, բայց ձեր բարբառից երևում է, որ վանեցիներ պիտի լինիք։

—Այո, մենք վանեցիներ ենք, պատասխանեց կենդանի աչքերով ծերունին, իսկ այս երկուսը՝ ցոյց տալով երկու ալեզարդ ծերերի վրայ՝ բաղէշցիք են։

—Ապա ինչո՞ւ այս խղճուկ երիտասարդին էլ ձեզ մօտ չէք տանում, չէք դարմանում ու խնամում նրա ցաւերը. դուք տեսնում էք, որ սա այստեղ անճար ու անօգնական է, մենակ է։

—Հոգուդ մատաղ, մենք ո՞րտեղ տուն ու ապաստան ունինք, որ նրան էլ մեզ մօտ տանենք և վերջապէս մենք ինչով կարող ենք սփոփել ու ամոքել այդ թշուառի սիրտն ու վէրքերը. չէ՞ որ նրան կանոնաւոր սնունդ, հագուստ ու բժշկութիւն է հարկաւոր. բայց մենք ո՞րտեղից կարող ենք հոգալ այդ ամենը. երբ ինքներս էլ մերկ ու սոված ենք...

—Մ՚թթէ դուք էլ բնակարան չունիք, ապա ո՞րտեղ էք ապրում։

—Աղքատանոցում։

—Ուրեմն ձեր վիճակն աւելի բարւոք կըլինի. երևի այնտեղ ձեզ հաց ու հագուստ էլ են տալիս. գնում ծերերին ու աշխատանքի անընդունակներին, հարցրի ես՝ աղքատանոցի անունը լսելով։

—Է՜յ, ախպար, չգիտենք մեր վրան կըլինդաս, թէ ինչ խամ ես։ Այստեղ աղքատանոցում բացի չորս պատից ու սառն յատակից ոչինչ չեն տալիս. միայն Զատկի թաթախման գիշերը ստացել ենք մի մի գրուանքայ բրինձ և էլ էս գրուանքայ իւղ. այնուհետև ամեն տարուայ ընթացքում և ոչ մի բան. Մարդկանց սրտերն էլ չոր ապառաժ է դարձել. գնում ենք, ամբողջ օրը այս հարուստ քաղաքը ման ենք գալիս և ինչ ենք ստանում օրական. հինգ-հինգ կամ տաս տաս կոպէկ, և այն էլ ինչ ելեսով. ես շատերի բերանին եմ լսել, աւելացրաւ ծերերից մէկը, թէ գաղթականներին ոչինչ չպէտք է տալ, նրանք արժանի չեն արգահատութեան, կարեկցութեան. լաւ մարդն աւելի բարւոք կը համարէր հայրենիքում մեռնել, քան օտարի գրան մուրացկանութիւն անել...

—Բայց մ՚թթէ դուք ոչինչ գործ չունել չէք կարող, մ՚թթէ աշխատելը ձեզ համար մի այնքան ծանր բան է, որ դուք նրանից խոյս էք տալիս և դիմում մուրացկանութեան, որն խոկապէս ամօթաբեր մի զբաղմունք է առողջ մարդու համար։ Բագուն կենդանի քաղաք է և այստեղ ամենիդ համար էլ գործ կը ճարուի։

Այս հարցը ես դիտմամբ առաջարկեցի, որպէսզի իմանամ նրանց կարծիքը աշխատանքի և մուրացկանութեան մասին։

—Աշխատանքը լաւ բան է, բայց իմացող և կարողութիւն ունեցողի համար։ Մենք ռանչպար մարդիկ ենք, գործից փախչող չենք. միայն թէ՝ մեր գութանից ու գերանդուց ջոկ ուրիշ արհեստներ չգիտենք. մշակութիւն էլ անել անկարող ենք, վասնզ Աստուծու, դու տես նում ես մեր հայն ու կերպարանքը, հագիւ հաղ ոտաւորների նման կարող ենք շարժուել։ Աշխատանքով էլ կարելի է ապրել, եթէ մենակ ինքդ լինիս, բայց մենք մի տուն քիւլֆաթ, մանր ու խոշոր երեխաներ ունինք, հիւանդ են. հինգ օր առաջ մէկն էր մեռել, վեց տարեկան աղջիկ էր, այսօր էլ մի երկու տարեկան ագայ է վախճանուել. եկել ենք տէրտէրի մօտ տեսնենք ինչ կասի։

Փո՛ւչ աղքատութիւն. ծնողներն իրանց զաւակների մահը պատմում են և չեն վրդովվում, չեն կսծում, լաց ու շիւան չեն անում, սառնասիրտ են. երևի, աղքատութիւնը բթացրել է նրանց ծնողական զգացմունքները։

—Ապա ինչո՞ւ հիւանդացողներին հիւանդանոց չէք տանում, յանդիմանաբար առաջարկեցի ես՝ ամենևին գաղափար չունենալով մեծահռչակ Բագու քաղաքի, իւր ժամանակին մեծ ազմուկ հանող չարաբաստիկ-հիւանդանոցի մասին։

Է՜հ, ինչ անենք. հիւանդանոցը նրանց չի կարող փրկել մահուան ճիրաններից, միևնոյն է՝ նրանք այնտեղ էլ մեռնելու են, որովհետև ոչ բժշկութիւն կայ և ոչ էլ կեր կամ խնամք։ Չորս լերկ պատեր և մի սառն յատակ. ահա քեզ այստեղի հիւանդանոցի կարճառօտ նկարագիրը։

Մենք գործին անգիտակ լինելով և լոկ դառն իրականութիւնն արձանագրելու գժբախտութիւնն ունենալով՝ պատասխանատուութիւնն ամբողջապէս թողնում ենք հիւանդանոցի վարչութեանը։ Սակայն մենք թոյլ ենք տալիս մեզ մի փոքր դուրս գալ մեր իրաւունց սահմանից և հրաւիրել ձեռնհաս «Մարդասիրական Ընկերութեան» ամենալուրջ ուշադրութիւնը եղբայրական այդ վհատոյն հարցի վրայ, որի վեմ և աստուածային խորհուրդն այնքան համոզիչ ու պերճախօս կերպով ուսանդել է մեր երկնային պատմիչը՝ ողորմած Սամարացու առակի մէջ։

Արտազ։

Բագու։

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՄՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9 –10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ԴՈՒՆԱՅԵՎԱ - ՐՈՒԴԵՆԿՈ—11—12 ժ. կանանց և երեխայոց համար։

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. կանանչի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մէղի և սեռական օրգանների ներքին և մաշքի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէղի, խիխ, արեան, կաթի և այլն։

Վճարը 50 կ.։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ։

ՎԻՐԱԲՈՒԺԱԿ· ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Մշտական մահճակալների բաժնով

ԴՕՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎԻ

(ՆԱԽԿԻՆ ԴՕՔՏՕՐ ԿԱՐՊԵՆՏԵՆԿՈՅԻ)
Սօլոլակ, Վօրոնեսենսկայա և Գուզովիչի փողոցների անկիւն №№ 9 և 13.
(ՏԵԼԵՓՕՆ № 273)

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։

Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎ, ժամը 10—12 վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների։

Ֆ. Խ. ԳԱԴԶԵՑԿԻ, ժամը 12½—1½ ջղային հիւանդութիւնների (երկուշ. չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Ն. Վ. ՊԱՐԻՅՑԿԻ, ժամը 1—2, վիրաբուժական և մէղի հիւանդութիւնների, մերսել (մասսաժ) և օսկրաբուժութիւն։

Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՈ, ժամը 12½—1½, ներքին հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ, ժամը 1½—3, կանանչի, կոկորդի և քթի հիւանդների երկուշ., չորեքշ. և շաբաթ օրերը)։

ԱՒԹԱՆԴԻԼՈՎ, ժամը 2—3, մանկաբարձութիւն և կանանց հիւանդութեանց։

Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՈ և Ա. Բ. ԱԼԷՔՍԷԵՎ, մանրադիտակով քիմիական և լաբորատորիական հետազօտութիւններ են կատարում՝ հետազօտութիւն մէղի, խորխի և արեան։

Հիւանդների ցանկութեամբ համախորհուրդ է լինում։ Բուժարանում կան բաժանմունքներ— մարմնամարզական — մասսաժի և օսկրաբուժական։

Խորհրդի համար վճարն է ՄԻ ՌՈՒԲԼԻ։

Աղքատների համար ՁՐԻ է։ Համախորհուրդների, անդամահատութեան, մասսաժի, մշտական մահճակալի, ելեկտրականութեան, լողարանի և ցնցուղի համար առանձին համաձայնութիւն պէտք է կայացնել։

Բժշկական ընդունարան

ԲԺՇԿ. ԴՕԿՏՕՐ.

ԱԻԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ

Սօլոլակ, Սերգիևսկի փողոց № 14.

Դոկտոր Բաբայեանի բացակայութեան պատճառով այս ամառ հիւանդների ընդունելութիւնը կըշարունակվի

ԴՕԿՏ. ՍԱՄ. ՇԱՀՊԱՐՈՆԵԱՆԸ

Բացի զգերից, գործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիկական մեթոդներ։

ԿԱՆԱՆՑ և ՆԵՐՔԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ

ընդունվում են ամեն օր (բացի կիրակի և ուրբաթ օրերից) ժ. 6½-ից երեկոյեան։

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻԶԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

Անցնում է իւր ձմեռնային բընակարանը շորեքշաբթի, հոկտեմբերի 2-ին։ Երեքշաբթի հոկտեմբերի 1-ին ժողովարանի ամառային այգիում տեղի կունենայ վերջին *ընդհանրական երեկոյթը*, իսկ այնուհետև ընդհանրական երեկոյթները վերացվում են մինչև ցնոր կարգադրութիւն։

(1—1)

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս.-Ի

Երկասիրութ. Ա. կապուկ գ.	50 կ.
Հէքիաթներ	30 »
Ծովինար	20 »
Ձէն թագաւորի աղջիկ . .	25 »
Գալօ-Ապօ.	10 »
Աստուած չճանաչող . . .	10 »
Աստուած ազրատի կերպում	20 »

40—50 օրինակով գնողներին սովորականից աւելի զիջում։

Թիֆլիզից դուրս տեղեր առաքելու փոստի ծախսերը հիգինակի վրայ։

Հասցէն «Արձագանքի» խմբագրատուն։

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԲՕՍՍԻԱ“

ԲԸԲՋԲԱԳՈՑՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1881 Թ.

Ս.-Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 25,500,000 ռ.

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետակ. բանկում։

Ընկերութիւնն ընդունում է՝

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

այսինքն գրամագլուխների և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեպհական ծերութիւնը, բաժինքը աղջիկների համար, թոշակները տղաների համար և այլն, առանձին շահաւէտ պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ Ընկերութեան օգուտներին։

1896 թուի յունվարի 1-ին «ԲՕՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապահովագրուած էին 35563 անձինք՝ 91,406,948 ռուբլի գրամագլխով։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱԽՏ ԴԷՊՔԵՐԻՑ

առանձին անձինքների, նոյնպէս և համագումար ապահովագրութիւններ գործարաններում՝ ծառայողների եւ բանուորների,—պակասացնելով ապահովագրական վճարները, դիվիդէնտի փոխարէն։

ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալուածքների (շինութիւնների, մեքենաների, ապրանքների, կահ-կարասիքների, եայլն։

ՏՐԱՆՍՊՕՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետային, ցամաքային եւ ծովային. ապահովագրութիւն նաւերի։

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում՝ (Большая Морская, սեպհական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան Վարչութեան մէջ, որ գտնվում է՝

ԹԻՖԼԻԶՈՒՄ, Սերգիևսկայա փ. տ. № 6. և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։

Ապահովագրութեան տոմսակներ՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար դժբաղդ դէպքերից՝ երկաթուղիներով և շոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ տրվում են նոյնպէս եռկաթուղիների կայարաններում և շոգենաւային նաւահանգիստներում։

(50—4)

Առաջիկայ **1897** թուականից կըհրատարակուի Նոր-Նախիջևանում

„ԳՈՐԾ“

ԳՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՑԱՄԵԱՅ ՀԱՆԴԷՍ

Երկու գրքի բաժանորդագին է Ռուսաստանում 3 ռուբլի, արտասահմանի համար—10 ֆրանկ։ Իւրաքանչիւր գիրքը առանձին կարժենայ 2 ռուբլի։ Բաժանորդագրութեան համար պէտք է դիմել՝ Нахичевань на Дону въ редакцію сборника „Горцъ“, իսկ արտասահմանից—Nakhitgevan sur le Don, Redaction de la Revue „Gorz“.

(3—1) *Խմբագիր-հրատարակիչ Երուանդ Շահազիզ։*

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ

Ա. Տէր-Յակովբեանի

(ՄԻԱԿ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԹԻՖԼԻԶՈՒՄ)

Ուսումնարանում ընդունվում են երեխեկ, կիսաթոշակաւոր և գիշերօթիկ աշակերտներ։ Պատրաստվում են զիմնազիաների, կադետների կօրպուսի, զեմստվոյի, ռեալական եւ այլ ուսումնարանների համար։

Փոքր պատրաստականում երեխաներն ընդունվում են առանց քննութեան՝ վեց տարեկանից սկսած. ընդունելութիւնը կըշարունակվի փոքր-պատրաստականում ամբողջ տարի. միւս դասարաններում ընդունելութիւնը կըկատարուի երեխաների նախապատրաստութեան համաձայն, նոյնպէս ամբողջ տարի։

Հասցէն. Тифлисъ, Гановская ул., № 11.

(5—4)

Дозволено цензурою, Тифлисъ 28-го Сентября 1896 года. Տպարան Մնացական Մարտիրոսեանցի։ Типографія М. Мартиросянца. На Михайловской ул. № 81